



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

7 մարտի 2017 թվականի

թիվ 7

քաղ. Բիշքեկ

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
ազրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական
արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով պահանջարկի
եւ առաջարկի՝ 2016-2017 թվականների համար համատեղ
կանխատեսումների մասին**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում հրապարակել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից մշակված եւ համաձայնեցված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով պահանջարկի եւ առաջարկի՝ 2016-2017 թվականների համար համատեղ կանխատեսումները՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից փոխադարձ առեւտրի ծավալները ավելացնելու նպատակով դրանք օգտագործելու համար:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի	Բելառուսի	Ղազախստանի	Ղրղզստանի	Ռուսաստանի
Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Դաշնությունից՝

Ագրոարդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական
արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով պահանջարկի
եւ առաջարկի՝ 2016-2017 թվականների համար համատեղ
կանխատեսումներ

Մոսկվա, 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Բաժին 1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի զարգացումը	5
1.1. Ընթացիկ իրավիճակը ագրոարդյունաբերական համալիրում	5
1.2. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման կանխատեսումը 2016-2017 թվականների համար	9
1.2.1. Հայաստանի Հանրապետություն	9
1.2.2. Բելառուսի Հանրապետություն	14
1.2.3. Ղազախստանի Հանրապետություն	19
1.2.4. Ղրղզստանի Հանրապետություն	24
1.2.5. Ռուսաստանի Դաշնություն	29
1.2.6. Եվրասիական տնտեսական միություն	34
Բաժին 2. Հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 22 հանձնարարականով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների նկատմամբ պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումները	39
2.1. ՀԱՑԱՀԱՏԻԿ	41
2.2. ՄԻՍ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔ	47
2.2.1. ՏԱՎԱՐԻ ՄԻՍ	53
2.2.2. ԽՈԶԻ ՄԻՍ	59
2.2.3. ՈՉԽԱՐԻ ՄԻՍ	65
2.2.4. ԹՌՉՆԱՄԻՍ	71
2.3. ԿԱԹ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔ	78
2.4. ՇԱՔԱՐ	85
2.5. ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂԵՐ	91
2.6. ԿԱՐՏՈՖԻԼ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	97
2.7. ՉՈՒ ԵՎ ՉՎԱՄԹԵՐՔ	103
Բաժին 3. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի զարգացման վերաբերյալ եզրահանգումներ եւ առաջարկություններ.....	108
ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱԳՐԵՐԸ	115
Հավելված 1	116
Հավելված 2	187

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով ԵԱՏՄ անդամ պետությունների համաձայնեցված ագրոարդյունաբերական քաղաքականության իրագործման շրջանակներում նախատեսված է ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի պահանջարկի եւ առաջարկի համատեղ կանխատեսումների պատրաստում (պայմանագրի 95-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետ):

Կանխատեսումները արտացոլում են Հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի փետրվարի 4-ի թիվ 2 որոշմամբ հաստատված Ինդիկատիվ ցուցանիշների ցանկին համապատասխան՝ 2016-2017 թվականների համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի վիճակը եւ զարգացման դինամիկան, ինչպես նաեւ Հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հունվարի 29-ի թիվ 1 հանձնարարականի համաձայն՝ նշված ժամանակահատվածի համար 11 ապրանքային դիրքերի մասով արտադրման եւ սպառման կանխատեսումային ցուցանիշները:

Միության անդամ պետությունների ԱԱՀ-ի զարգացման, գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի մասով պահանջարկի եւ առաջարկի՝ 2016-2017 թվականների համար համատեղ կանխատեսումը ձեւավորված է Միության անդամ պետությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա եւ ներառում է Միության ԱԱՀ-ում ընթացիկ իրավիճակի վերլուծությունը, ԱԱՀ-ի զարգացման կանխատեսումային ցուցանիշները Միությունում ընդհանուր առմամբ եւ յուրաքանչյուր անդամ պետությունում, ինչպես նաեւ փոխադարձ մատակարարումների ներուժի գնահատականը:

Համատեղ կանխատեսումը ԱԱՀ-ի հիմնական ճյուղերի զարգացման հեռանկարների, դրանց ներդրումային գրավչության գնահատման՝ հաշվի առնելով Միության շուկայի ծավալը, եւ պարենային անվտանգության ապահովման հիմքն է:

Համատեղ կանխատեսումների ձեւավորումը նպաստում է կանխատեսման ոլորտում ազգային իրավասությունների զարգացմանը, ԵԱՏՄ գործընկերների շահերի կարճաժամկետ եւ միջնաժամկետ պլանավորման ժամանակ առաջանում է տեղեկատվական հիմք հաշվառման համար:

Բաժին 1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի զարգացումը

1.1. Ընթացիկ իրավիճակը ագրոարդյունաբերական համալիրում

Միության ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է շուրջ 4%: Առավելագույն մասնաբաժինը՝ Հայաստանում (20%), նվազագույնը՝ Ռուսաստանում (4%):


2014 թվականին 2012 թվականի համեմատ Միության անդամ պետությունների գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը ավելացել է 9%-ով մինչև 142,8 մլրդ. դոլար:

Բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական արտադրանքի արտադրության մասով առաջատարն է Բելառուսը՝ 1 352 դոլար, ընդ որում՝ Միության միջին կշռված ցուցանիշն է 803 դոլար:

Վերլուծվող ժամանակահատվածում Միությունում դիտվել է բանջարեղենի արտադրության նշանակալի աճ եւ կաթի արտադրության դանդաղեցված աճ:

Մսի, հացահատիկի եւ ձվի մասով հստակ արտահայտված միտումներ չեն նկատվում: Հացահատիկի մասով 2014 թվականին 2013 թվականի համեմատ տեղի է ունեցել արտադրության աճի տեմպերի կտրուկ անկում՝ 2013 թվականի թռիչքի ֆոնի

Գյուղատնտեսության համախառն ավելացված արժեքը 2014 թվականին




Գյուղատնտեսական արտադրությունը 2014 թվականի արդյունքներով

Երկիր/Տարածաշրջան	ինդեքս, 2014 թվականը 2012 թվականի համեմատ, %-ով	Ընդամենը՝ մլրդ ԱՄՆ դոլար	բնակչության մեկ շնչին ընկնող, ԱՄՆ դոլար
ԵԱՏՄ	109.1	142.8	803.0
Հայաստան	114.8	2.4	792.0
Բելառուս	98,6	12.8	1,352.0
Ղազախստան	112,6	14.1	810.0
Ղրղզստան	102,1	3.7	619.0
Ռուսաստան	109,7	109.8	774.0

վրա: Մսի եւ ձվի մասով իրավիճակը հակառակն է՝ արտադրությունը նվազել է 2013 թվականին եւ ավելացել 2014 թվականին:

Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտադրության աճը ազդել է հիմնական գյուղատնտեսական արտադրանքով ինքնաապահովվածության մակարդակի մինչեւ 91,2% բարձրացման վրա:

Գյուղատնտեսական արտադրության աճի տեմպը, %



Միության անդամ պետությունները ԽԵԱ-ի մսի մասով ապահովում են իրենց շուրջ 80%-ով, կաթի, թռչնամսի ու խոզի մսի մասով՝ շուրջ 90%-ով:

Միության ինքնաապահովվածության նվազագույն մակարդակը դիտվում է պտուղ-հատապտղային արտադրանքի մասով՝ խաղող, խնձոր եւ տանձ:

2014 թվականի արդյունքներով գյուղատնտեսական արտադրանք արտադրողների գները էապես տատանվել են՝ 1%-ից մինչեւ 21%: Գների առավելագույն աճը արձանագրվել է Բելառուսում, նվազագույնը՝ Հայաստանում:

Հիմնական մթերքով Միության ինքնաապահովվածության մակարդակը 2014 թվականին

Արտադրանք	Մպառումը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, կգ/մարդ	Ինքնաապահովվածության մակարդակը, %
տավարի միս	16,9	79,6
խոզի միս	21,3	87,0
ոչխարի միս	2,5	99,9
թռչնամիս	29,2	93,2
կաթ	272,6	91,6
ձու, հատ/մարդ	281,1	100,0
հացահատիկ	555,0	144,3
կարտոֆիլ	241,6	98,5


Չնայած վերլուծվող ժամանակահատվածում գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի մասով ավելի քան 20%-ով (մինչեւ գրեթե 9 մլրդ դոլար) փոխադարձ առևտրի աճին՝ ներմուծումը երրորդ երկրներից 2014 թվականին կազմել է 43,1 մլրդ դոլար:

Հայաստանի, Բելառուսի եւ Ղրղզստանի գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի մատակարարման հիմնական մասը բաժին է ընկնում Միության երկրներին: Այսպիսով, Միության գործընկեր երկրների տեսակարար կշիռը Հայաստանի արտահանման մեջ կազմում է 58%, Բելառուսի արտահանման մեջ՝ 88%, Ղրղզստանի արտահանման մեջ՝ 49%:

Ընդհանուր առմամբ անդամ պետությունները արտահանում են գյուղատնտեսական հումքի զգալի ծավալներ (46%): Ընդ որում, վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման ծավալը կազմում է պարենի ներմուծման կեսից ավելին՝ վճարելով երրորդ երկրներին ավելացված արժեքը, որը ձեւավորվել է վերամշակումից հետո: Այդ կապակցությամբ նպատակահարմար է նվազեցնել հումքի մասնաբաժինը արտահանման կառուցվածքում եւ գյուղատնտեսական հումքի առավելապես խորը վերամշակման արտադրանքի մատակարարումներով դիվերսիֆիկացնել արտահանման ապրանքային կառուցվածքը:

բանջարեղեն	139,7	88,8
պտուղ եւ հատապտուղ	39,6	60,9
բուս. յուղ	22,1	131,9
շաքար	36,6	95,0

Գնողունակության գնահատականը
2014 թվականին




Ներտարածաշրջանային առևտրի
բաժնեմասը գ/տ արտադրանքի եւ պարենի
առևտրի ընդհանուր ծավալում
2014 թվականին, %

Երկիր/ Տարածաշրջան	ներմուծում	արտահանում
Միություն	16,0	32,0
ՀՀ	23,6	57,7
ԲՀ	25,8	88,0
ՂՀ	42,8	22,2
ՂրՀ	61,8	49,2
ՌԴ	10,8	16,2


2014 թվականին 2012 թվականի համեմատ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծումը երրորդ երկրներից կրճատվել է 4%-ով: Ներմուծման կառուցվածք փոփոխելու՝ վերամշակված արտադրանքի բաժնեմասը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է մրցունակ սննդամթերքի զարգացում՝ սպառողական հատկանիշների տեսակետից:

Հաշվի առնելով աշխարհում բնակչության աճը ու Եվրասիական տարածաշրջանում եւ գլոբալ մակարդակով պարենային անվտանգությունն ապահովելու Միության երկրների մեծ ներուժը՝ նպատակահարմար է ներդրումների համար ստեղծել խթաններ՝ ագրոարդյունաբերության մրցունակության եւ կայունության բարձրացման նպատակով:

Երրորդ երկրներ գ/տ արտադրանքի եւ պարենի արտահանման կառուցվածքը 2014 թվականի արդյունքներով,%



Երրորդ երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի ներմուծման կառուցվածքը 2014 թվականի արդյունքներով,%



1.2. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման կանխատեսումը

2016-2017 թվականների համար

1.2.1. Հայաստանի Հանրապետություն


Գյուղատնտեսության ներդրումը ՀՆԱ-ի մեջ գնահատվում է շուրջ 20% եւ գերազանցում է տնտեսության մյուս ճյուղերը: Գյուղատնտեսությունը ՀՆԱ-ի աճի շարժիչ ուժն է:

2017 թվականին 2015 թվականի համեմատ կանխատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության 7,5%-ով աճ: Դա պայմանավորված է արտադրանքի արտադրության ավելացմամբ՝ ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնաբուծության:


Բուսաբուծական արտադրանքի արտադրության աճը կանխատեսվում է ցանքատարածությունների եւ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացման հաշվին: Կանխատեսումային ժամանակահատվածում ցանքատարածությունները կաճեն գրեթե 40 հազ. հեկտարով, ինչը մեծապես կնպաստի հացահատիկի եւ հատիկալընդէնայինների արտադրության ավելացմանը՝ մինչեւ 688 հազ. տոննա:

Կանխատեսվում է կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանայինների բերքի ամենամյա աճ: Ընդ որում, պտուղների եւ հատապտուղների արտադրության կանխատեսումային ցուցանիշները չունեն հստակ արտահայտված միտումներ: Դա պայմանավորված է արտադրության ցիկլայնությամբ, ինչպես նաեւ անբարենպաստ եղանակային պայմանների

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը




Գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն, հազ. տոննա



ազդեցությամբ: Օրինակ՝ 2014 թվականին վաղ ցրտահարության եւ կարկտի պատճառով վնասվել է ծիրանի բերքի շուրջ 90%-ը:

Անասուն եւ թռչուն՝ սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա



Անասնաբուծական արտադրանքի արտադրության ավելացումը պայմանավորված է ԽԵԱ-ի, ՄԵԱ-ի, խոզերի եւ թռչունների գլխաքանակի, ինչպես նաեւ կենդանիների մթերատվության աճով:

Պարենով ապահովվածության մակարդակի կանխատեսումը 2017 թվականին,%

2017 թվականին սպասվում է ոչխարի մսի, ձվի, կարտոֆիլի, բանջարեղենի, խնձորի, ծիրանի եւ հատապտուղների, խաղողի սպառման սեփական արտադրությունով ապահովում: Հաշվի առնելով Միության երկրներից մատակարարումները՝ տավարի մսի եւ խոզի մսի մասով ապահովվածությունը կզերպանցի սպառման ծավալի 100%-ը, թռչնամսի մասով՝ 83%-ը: Կարելու է նշել, որ 2014 թվականի արդյունքներով խոզի մսի եւ ընտանի թռչնի մսի պահանջումները ապահովվել է երրորդ երկրներից մատակարարումներով՝ համապատասխանաբար 34,3%-ով եւ 79,4%-ով:

Արտադրանքը	Սեփական արտադրության հաշվին	Հաշվի առնելով արտադրությունը եւ մատակարարումները Միությունից
տավարի միս	93,2	100,4
խոզի միս	78,3	107,9
ոչխարի միս	120,9	120,9
թռչնամիս	24,8	83,5
կաթ	93,1	94,4
ձու	101,7	101,8
հացահատիկ	67,9	97,6
կարտոֆիլ	106,0	106,0
բանջարեղեն	102,4	102,4
պտուղ եւ հատապտուղ	111,8	111,8
խաղող	105,7	105,7


2017 թվականին 2014 թվականի համեմատ կանխատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ապրանքաշրջանառության նվազում: Արտահանման ծավալը կաճի 15%-ով մինչեւ գրեթե 500 մլն դոլար, իսկ ներմուծման ծավալները կնվազեն 35%-ով մինչեւ 529 մլն. դոլար: Դա կհանգեցնի գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտաքին առևտրի սալդոյի բարելավմանը 353 մլն. դոլարով: 2017 թվականին այդ ցուցանիշը կկազմի մինուս 35 մլն. դոլար:

Միության երկրների մասնաբաժինն արտահանման մեջ կպահպանվի 59% մակարդակի վրա, ներմուծման մեջ կավելանա մինչեւ 29%:


Հայաստանը նախատեսում է ավելացնել 4 անգամ մինչեւ 98 հազ. տոննա կաթի եւ կաթնամթերքի, 5,5 անգամ մինչեւ 45 հազ. տոննա պտուղների եւ հատապտուղների, 7 անգամ մինչեւ 40 հազ. տոննա բանջարեղենի, 6 անգամ մինչեւ 6,5 հազ. տոննա մսի եւ մսամթերքի, ինչպես նաեւ ավելի, քան 2 անգամ մինչեւ 17 հազ. տոննա եւ 49 հազար տոննա համապատասխանաբար խաղողի եւ կարտոֆիլի արտահանումն ու դուրսբերումը:

Սպասվում է ԵԱՏՄ-ի գործընկեր երկրներից եւ երրորդ երկրներից 16%-ով մինչեւ 332 հազ. տոննա հացահատիկի, ինչպես նաեւ 19,3%-ով մինչեւ 45,5 հազ. տոննա մսի եւ մսամթերքի ներսերման նվազում, կարտոֆիլի եւ բուսական յուղի ներմուծումը

Միության երկրներ գ/տ արտադրանքի արտահանման եւ դուրսբերման կանխատեսումը, մլն դոլար



Միության երկրներից գ/տ արտադրանքի ներմուծման եւ ներսերման կանխատեսումը, մլն դոլար




կապահպանվի 2014 թվականի մակարդակի վրա: Բանջարեղենի մատակարարումները երկիր կավելանան 15%-ով, կաթինը եւ կաթնամթերքինը՝ 3%-ով:


Չնայած տրակտորների եւ հացահատիկահավաք կոմբայնների քանակի նախատեսվող ավելացմանը՝ ցանքատարածությունների առաջանցիկ աճի տեմպը կհանգեցնի գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության նվազեցմանը:

Կանխատեսումային ժամանակահատվածում գյուղատնտեսության աշխատողների միջին ամսական աշխատավարձի մակարդակը կավելանա ամբողջ տնտեսության կտրվածքով միջին ամսական աշխատավարձի մինչեւ 68%-ով: 2017 թվականին գյուղատնտեսությունում միջին ամսական աշխատավարձը կկազմի 129 հազ. դրամ (համարժեք է 270 դոլարին):

Միության երկրներ գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումն ու դուրսբերումը



Միության երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումն ու ներսբերումը, հազ տոննա



**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հեկտարի
համար, եւ հանքային պարարտանյութերի
ներմուծման՝ կգ/հա գ/տ հողեր, տեսակարար
ցուցանիշները**


Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	38,5	36,9	36,2	35,7
Հացահատիկահավաք կոմբայններ	7,2	6,8	7,0	7,1
Կերահավաք կոմբայններ	5,3	5,2	5,5	5,7
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով	29,0	30,0	38,0	40,0

1.2.2. Բելառուսի Հանրապետություն


Կանխատեսումային ժամանակահատվածում սպասվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության աճ: Սակայն դոլարային արտահայտությամբ գյուղատնտեսական արտադրության ծավալները չեն հասնի 2014 թվականի ցուցանիշին՝ ազգային արժույթի փոխարժեքը 2015 թվականի մակարդակի վրա պահպանվելու դեպքում: Հացահատիկի, շաքարի ճակնդեղի, յուղատու մշակաբույսերի, կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրությունը կպահպանվի գրեթե 2014 թվականի մակարդակի վրա: Ընդ որում, կանխատեսվում է պտուղների եւ հատապտուղների արտադրության կրճատում 24%-ով մինչեւ 480 հազ. տոննա:

Անասնաբուծական արտադրանքի մասով նախատեսվում է 14%-ով մինչեւ 7,6 մլն տոննա կաթի եւ 13%-ով մինչեւ 335 հազ. տոննա տավարի մսի արտադրության աճ՝ 16 հազարով կովերի գլխաքանակի աճի դեպքում: Բացի այդ, կանխատեսվում է խոզի մսի արտադրության ավելացում 8%-ով մինչեւ 389 հազ. տոննա՝ 113 հազարով գլխաքանակի աճի դեպքում, ինչպես նաեւ 30%-ով մինչեւ 1,3 հազ. տոննա ոչխարի մսի եւ, 2,5 մլն-ով թռչունների գլխաքանակի ավելացման դեպքում՝ 7,5%-ով մինչեւ 445 հազ. տոննա թռչնամսի արտադրության ավելացում:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը




Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, հազ. տոննա



2017 թվականի արդյունքներով սպասվում է տավարի մսով, խոզի մսով, թռչնամսով, կաթով, ձվով, հացահատիկով, կարտոֆիլով եւ բանջարեղենով ինքնաապահովվածության բարձր մակարդակի պահպանում:

Ընդ որում, երրորդ երկրներից պտուղների եւ հատապտուղների ներմուծման հետ կապված մատակարարումներից կախվածությունը կկազմի 29,3%:

Անասուն եւ թռչուն՝ սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա



Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման ավելացում սպասվում է Միության շուկա այն մատակարարումների աճի հաշվին, որոնք 2017 թվականի արդյունքներով գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման կազմում կկազմեն 95%: Սակայն արտահանման արժեքային ծավալները կմնան 2014 թվականի ցուցանիշից ցածր՝ վերաարտահանման ծավալների նվազման պայմանով:

Բնափրային արտահայտությամբ սպասվում է մինչեւ 50 հազ. տոննա հացահատիկի, 44%-ով մինչեւ 300 հազ. տոննա կարտոֆիլի, 15%-ով մինչեւ 397 հազ. տոննա մսի եւ մսամթերքի, 26%-ով մինչեւ 4,9 մլն. տոննա կաթի եւ կաթնամթերքի արտահանման եւ դուրսբերման աճ: Ընդ որում, շաքարի

Պարենով ապահովվածության մակարդակի կանխատեսում 2017 թվականին, %

Արտադրանք	Սեփական արտադրության հաշվին	Հաշվի առնելով արտադրությունը եւ մատակարարումները Միությունից
տավարի միս	166,7	166,8
խոզի միս	99,0	99,3
ոչխարի միս	97,8	100,0
թռչնամիս	131,6	132,2
կաթ	267,1	269,3
ձու	129,5	129,7
հացահատիկ	103,6	104,2
կարտոֆիլ	104,9	105,2
բանջարեղեն	105,3	115,8
պտուղ եւ հատապտուղ	70,7	70,7
խաղող	0,5	2,5


արտահանումը կնվազի 38%-ով մինչև 250 հազ. տոննա, սեփական արտադրության պտուղների եւ բանջարեղենի արտահանումը կպահպանվի հին ծավալներով:

Սպասվում է երրորդ երկրներից գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծման նվազում Միության անդամ պետություններից 1 մլրդ դոլարից ավելի ծավալով ներսերման պահպանման դեպքում, ինչը գյուղատնտեսական ապրանքների ներմուծման կառուցվածքում կկազմի 23%:


Կանխատեսումային ժամանակահատվածի ընթացքում սեփական սպառման համար ներմուծման ծավալները հացահատիկի մասով կսահմանվեն 100 հազ. տոննա, կարտոֆիլի (այդ թվում՝ սերմային) մասով 16 հազ. տոննա, բանջարեղենի մասով 161 հազ. տոննա, խաղողի մասով 20 հազ. տոննա, պտուղների եւ հատապտուղների մասով 222 հազ. տոննա, մսի եւ մսամթերքի մասով 46,5 հազ. տոննա, կաթի եւ կաթնամթերքի մասով 125 հազ. տոննա մակարդակի վրա: Ընդ որում, շաքարի հումքի ներմուծումը կկրճատվի 15%-ով մինչև 210 հազ. տոննա:

Գյուղատնտեսության հիմնական կապիտալի մեջ ազգային արժույթով ներդրումները կպահպանվեն 2014-2015 թվականների մակարդակի վրա:

Միության երկրներ գ/տ արտադրանքի արտահանման եւ դուրսբերման կանխատեսումը, մլն դոլար



Միության երկրներից գ/տ արտադրանքի ներմուծման եւ ներսերման կանխատեսումը, մլն. դոլար




Սպասվում է գյուղատնտեսությունում զբաղվածների քանակի կրճատում 5%-ով մինչև 300 հազ. մարդ, ընդ որում՝ գյուղատնտեսության աշխատողների աշխատավարձը կպահպանվի ամբողջ տնտեսության կտրվածքով աշխատավարձի 75% մակարդակի վրա: 2017 թվականին աշխատավարձը գյուղատնտեսությունում կկազմի 7 080 հազ. ԲԷԼ ռուբ. (համարժեք է 446 դոլարին):

Կանխատեսվում է գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության բարելավում՝ տրակտորների քանակը կավելանա 3,5 հազ. հատով, հացահատիկահավաք կոմբայնները՝ 700 հատով, կերահավաք կոմբայնները՝ 1 հազ. հատով:


Կանխատեսումային ժամանակահատվածի ընթացքում բուսաբուծական արտադրանքի շահութաբերությունը կկազմի 6-7%, անասնաբուծականինը՝ 5-6%:

Միության երկրների շուկա գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումն ու դուրսբերումը, հազ. տոննա



2015-2017 թթ.՝ բանջարեղենի և պտուղների վերաբերյալ տվյալները տրված են առանց վերաարտահանման ծավալները հաշվի առնելու:

Միության երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումն ու ներսբերումը, հազ. տոննա



2015-2017 թթ.՝ բանջարեղենի և պտուղների վերաբերյալ տվյալները տրված են առանց վերաարտահանման ծավալները հաշվի առնելու:

**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հա-ի
համար, եւ հանքային պարարտանյութերի
ներմուծման՝ կգ/հա գ/տ հողեր, տեսակարար
ցուցանիշները**

Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	7,2	7,7	7,8	7,8
Հացահատիկահավաք կոմբայններ	4,2	4,0	4,3	4,5
Կերահավաք կոմբայններ	1,5	1,8	1,9	1,9
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով, կգ/հա	162,0	133,0	228,0	228,0


1.2.3. Ղազախստանի Հանրապետություն

Կանխատեսումային ժամանակահատվածում սպասվում է գյուղատնտեսության աճ: Մասնավորապես, ենթադրվում է 15%-ով մինչև 19,7 մլն. տոննա հացահատիկի, 9%-ով մինչև 1,7 մլն տոննա յուղատու մշակաբույսերի, 24 հազ. տոննայից մինչև 475 հազ. տոննա շաքարի ճակնդեղի, 55%-ով մինչև 109 հազ. տոննա խաղողի, 30%-ով մինչև 302 հազ. տոննա պտուղների եւ հատապտուղների արտադրության ավելացում:

2017 թվականին կանխատեսվում է բոստանային մշակաբույսերի արտադրության նվազում՝ պայմանավորված ցանքատարածությունների 22%-ով կրճատմամբ: Յուղատու մշակաբույսերի արտադրության աճը տեղի է ունենալու ցանքատարածությունների 13%-ով կրճատման ֆոնի վրա: Կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրությունը կպահպանվի 2014 թվականի մակարդակի վրա:


Անասնաբուծության մասով կանխատեսվում է ինչպես անասնազլխաքանակի եւ թռչունների գլխաքանակի (մասնավորապես կովերի քանակը կավելանա 14%-ով մինչև 3,2 մլն.), այնպես էլ սպանդի համար անասունների եւ թռչունների արտադրության աճ (սպանդային քաշով) 7,3%-ով մինչև 966,3 հազ. տոննա: Թռչնամսի արտադրությունը կավելանա 52%-ով մինչև 205 հազ. տոննա, տավարի մսինը՝ 7%-ով մինչև 435 հազ. տոննա:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը



2015-2017 թթ.՝ գնահատում 2015 թվականի միջին տարեկան փոխարժեքով:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, հազ. տոննա



Ղազախստանը լիովին ապահովում է իրեն հացահատիկով, տավարի մսով, խոզի մսով, ոչխարի մսով, ձվով եւ կարտոֆիլով:


Հաշվի առնելով Միության երկրներից մատակարարումները՝ Ղազախստանի բնակչության կողմից սպառումը լիովին ապահովված կլինի կաթի, թռչնամսի մասով՝ 81,0%-ով, խնձորի, տանձի եւ պտուղների մասով՝ 67,9%-ով, խաղողի մասով՝ 63,3%-ով: 2014 թվականի համեմատ սեփական արտադրության արտադրանքով ապահովվածությունը կավելանա թռչնամսի մասով: Միեւնույն ժամանակ չբավարարող ծավալների մատակարարումները կշարունակվեն առավելապես երրորդ երկրներից:

Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման աճը առավելապես ապահովված է լինելու երրորդ երկրներ մատակարարումների աճով:

Միության ներքին շուկա գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի մատակարարումները նախատեսվում է ավելացնել կաթի եւ կաթնամթերքի հաշվին՝ 57 հազ. տոննայով, մսի եւ մսամթերքի հաշվին՝ 9 հազ. տոննայով, խաղողի հաշվին՝ 3 հազ. տոննայով, պտուղների եւ հատապտուղների հաշվին՝ 5,6 հազ. տոննայով:

Ընդհանուր առմամբ սպասվում է ավելի, քան 400 հազ. տոննայով հացահատիկի եւ 12 հազ. տոննայով բուսական յուղի դուրսբերման աճ:

Անասուն եւ թռչուն՝ սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա




Պարենով ապահովվածության մակարդակի կանխատեսումը 2017 թվականին, %

Արտադրանքը	Սեփական արտադրության հաշվին	Հաշվի առնելով արտադրությունը եւ մատակարարումները Միությունից
տավարի միս	98,7	99,4
խոզի միս	99,8	100,2
ոչխարի միս	102,9	102,9
թռչնամիս	76,9	81,0
կաթ	92,5	97,8
ձու	110,0	110,7
հացահատիկ	130,5	130,8
կարտոֆիլ	98,9	99,4
բանջարեղեն	91,9	92,0
պտուղ եւ հատապտուղ	61,4	67,9
խաղող	62,7	63,3


Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծման, փոխադարձ եւ արտաքին մատակարարումների կառուցվածքը կպահպանվի 2014 թվականի մակարդակի վրա՝ ներմուծման արժեքային ծավալների կրճատման դեպքում: Ընդ որում, սպասվում է երրորդ երկրներից պտուղների եւ հատապտուղների (խնձորի, տանձի) ներմուծման 42%-ով մինչեւ 200 հազ. տոննա նվազում:

Կանխատեսվում է 16%-ով կաթի եւ կաթնամթերքի, 18%-ով մսի եւ մսամթերքի, ավելի, քան 20%-ով բանջարեղենի եւ խաղողի ներսերման նվազում: Շաքարի ներմուծման ծավալները կպահպանվեն 2014 թվականի մակարդակի վրա:

Միության երկրներ գ/տ արտադրանքի եւ պարենի արտահանման եւ դուրսբերման կանխատեսումը, մլն. դոլար



Միության երկրներից գ/տ արտադրանքի ներմուծման եւ ներսերման կանխատեսումը, մլն. դոլար



2017 թվականին գյուղատնտեսության հիմնական կապիտալի մեջ ներդրումները կավելանան 19%-ով մինչեւ 206 մլրդ տեւգե (համարժեք է 930 մլն դոլարին):


Կանխատեսումների համաձայն հանքային պարարտանյութերի օգտագործումը ավելանալու է:

Ցանքատարածության ավելացման ֆոնի վրա ավելանալու է գյուղատնտեսական տեխնիկայի ծանրաբեռնվածությունը:


Բուսաբուծական արտադրանքի շահութաբերությունը կպահպանվի 2014 թվականի մակարդակի վրա եւ կկազմի 42,6%, անասնաբուծական արտադրանքի շահութաբերությունը կնվազի 2 տոկոսային կետով մինչեւ 25%:

2017 թվականին միջին ամսական աշխատավարձը գյուղատնտեսությունում կկազմի ավելի քան 80 հազ. տենգե (համարժեք է 362 դոլարին): Միջին ամսական աշխատավարձի հարաբերակցությունը գյուղատնտեսությունում եւ տնտեսությունում ընդհանուր առմամբ կնվազի 1 տոկոսային կետով մինչեւ 53,9%:

Միության երկրներ գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումն ու դուրսբերումը, հազ. տոննա



Միության երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումն ու ներսբերումը, հազ. տոննա



**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հա-ի
համար, եւ հանքային պարարտանյութերի՝
կգ/հա գ/տ հողեր, ներմուծման
տեսակարար ցուցանիշները**


Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	7,1	7,3	7,0	7,0
Հացահատիկահավաք կոմբայններ	3,0	3,0	2,8	2,8
Կերահավաք կոմբայններ	0,5	0,4	0,4	0,4
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով, կգ/հա	6.7*	7.3*	7.8*	8.4*

1.2.4. Դրդստանի Հանրապետություն

Կանխատեսումային ժամանակահատվածում սպասվում է գյուղատնտեսության աճ: 2017 թվականին կանխատեսվում է 14%-ով մինչև ավելի, քան 1,6 մլն. տոննա հացահատիկի՝ ցանքատարածության 4%-ով նվազման դեպքում, 44%-ով մինչև 250 հազ. տոննա շաքարի ճակնդեղի՝ ցանքատարածության՝ 2014 թվականի մակարդակի վրա պահպանման դեպքում, 20%-ով մինչև 55 հազ. տոննա յուղատու մշակաբույսերի, 10%-ով մինչև 1,5 մլն. տոննա կարտոֆիլի, 19%-ով մինչև 1,1 մլն. տոննա բանջարեղենի, 31%-ով մինչև 263 հազ. տոննա բոստանային մշակաբույսերի, 5%-ով մինչև 8,9 հազ. տոննա խաղողի, 3%-ով մինչև 245 հազ. տոննա պտուղների եւ հատապտուղների արտադրության ավելացում:


Սպասվում է 6%-ով մինչև 1,54 մլն. տոննա կաթի արտադրության, 13%-ով մինչև 113 հազ. տոննա տավարի մսի՝ կովերի գլխաքանակի՝ 17%-ով մինչև 842 հազ. գլուխ աճի դեպքում, 14%-ով մինչև 77 հազ տոննա ոչխարի մսի՝ գլխաքանակի՝ 10%-ով մինչև 6,2 մլն. գլուխ աճի դեպքում, 5%-ով մինչև 4,6 հազ. տոննա թռչնամսի՝ գլխաքանակի մինչև 5,5 մլն. գլուխ աճի դեպքում աճ: Խոզի մսի արտադրությունը կպահպանվի 2014 թվականի մակարդակի վրա՝ խոզերի գլխաքանակի՝ 15%-ով մինչև 60 հազ. գլուխ աճի դեպքում:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը



2015-2017 թթ.՝ գնահատում 2015 թվականի միջին տարեկան փոխարժեքով

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, հազ. տոննա




Ղրղզստանը լիովին ապահովում է իրեն տավարի մսով, ոչխարի մսով, կաթով, կարտոֆիլով, բանջարեղենով, պտուղներով և հատապտուղներով: Հաշվի առնելով Միության երկրներից մատակարարումները՝ ապահովվում է ձվի և հացահատիկի պահանջումները:

Պահպանվում է երրորդ երկրներից խոզի մսի մատակարարումներից կախվածությունը՝ խոզի մսի սպառման 22%-ի, թռչնամսի սպառման 74%-ի, խաղողի սպառման 31%-ի չափով:

Արտահանման կառուցվածքում Միության ներքին շուկա մատակարարումների բաժնեմասը 49%-ից կաճի մինչև 63%, ինչը կապված է բանջարեղենի և տավարի մսի մատակարարումների սպասվող ավելացման հետ: Ընդ որում, գյուղատնտեսական արտադրանքի և պարենի արտահանումը ընդհանուր առմամբ կավելանա 11%-ով մինչև 277 մլն. դոլար: Սպասվում է 15%-ով մինչև 39 հազ. տոննա կարտոֆիլի, 84%-ով մինչև 210 հազ. տոննա բանջարեղենի, 4 տոննայից մինչև 20 հազ. տոննա տավարի մսի արտահանման աճ: Կաթի և կաթնամթերքի արտահանումը կավելանա 2%-ով մինչև 129 հազ. տոննա: Միեւնույն ժամանակ պտուղների և հատապտուղների արտահանումը կկրճատվի 77%-ով մինչև 17,5 հազ. տոննա:

Սպասվում է ներմուծման արժեքային ծավալների՝ 5%-ով մինչև 800 մլն. դոլար նվազում: Հացահատիկի մատակարարման ֆիզիկական ծավալները կկրճատվեն 25%-ով մինչև 362 հազ. տոննա,

Անասուն և թռչուն՝ սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա




Պարենով ապահովվածության մակարդակի կանխատեսումը 2017 թվականին, %


Արտադրանքը	Սեփական արտադրության հաշվին	Հաշվի առնելով արտադրությունը և մատակարարումները Միությունից
տավարի միս	120,9	121,1
խոզի միս	78,2	78,2
ոչխարի միս	100,4	100,4
թռչնամիս	8,8	25,9
կաթ	106,9	107,6
ձու	93,7	100,6
հացահատիկ	82,3	100,2
կարտոֆիլ	102,7	102,7
բանջարեղեն	121,6	122,4
պտուղ և հատապտուղ	96,3	97,2
խաղող	69,0	69,0

շաքարինը՝ 18%-ով մինչև 68 հազ. տոննա, մսինը եւ մսամթերքինը՝ 5%-ով մինչև 63 հազ. տոննա, ձվինը՝ 60%-ով մինչև 45 մլն. հատ: Ընդ որում, կաթի եւ կաթնամթերքի մատակարարումները կպահպանվեն 17 հազ. տոննա մակարդակի վրա, 5%-ով մինչև 103 հազ. տոննա կավելանան բուսական յուղի մատակարարումները՝ հիմնականում Միության երկրներից մատակարարումների հաշվին: Կանխատեսվում է առավելապես երրորդ երկրներից երեք անգամ մինչև 5,5 հազ. տոննա խաղողի, 4 անգամ մինչև 27 հազ. տոննա պտուղների եւ հատապտուղների ներմուծման աճ:

Միության երկրներ գ/տ արտադրանքի արտահանման եւ դուրսբերման կանխատեսումը, մլն. դոլար



Միության երկրներից գ/տ արտադրանքի ներմուծման եւ ներսբերման կանխատեսումը, մլն. դոլար



Կանխատեսումային ժամանակահատվածում գյուղատնտեսության հիմնական կապիտալի մեջ ներդրումները չունեն հստակ միտում եւ կապված են առանձին նախագծերի իրազորման հետ:


2017 թվականին միջին ամսական աշխատավարձը գյուղատնտեսությունում կկազմի

6,8 հազ. տոմ (համարժեք է 106 դոլարին) կամ ամբողջ տնտեսության կտրվածքով միջին ամսական աշխատավարձի 42% (2014 թվականին՝ 51%):


Տրակտորների քանակը կավելանա 7%-ով մինչև 22 հազ. հատ:

2017 թվականի արդյունքներով բուսաբուծական արտադրանքի շահութաբերության կանխատեսումային ցուցանիշը կկազմի 20%, անասնաբուծական արտադրանքինը՝ 30%:

Միության երկրների շուկա գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումն ու դուրսբերումը, հազ. տոննա



Միության երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումն ու ներսբերումը, հազ. տոննա



**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հա-ի
համար, եւ հանքային պարարտանյութերի՝
կգ/հա գ/տ հողեր, ներմուծման տեսակարար
ցուցանիշները**

Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	17,4	18,1	18,2	18,4
Հացահատիկահավաք կոմբայններ	3,6	3,5	3,6	3,6
Կերահավաք կոմբայններ	0,0	0,0	0,0	0,0
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով, կգ/հա	30,5	25,0	25,0	25,0


1.2.5. Ռուսաստանի Դաշնություն

Կանխատեսումային ժամանակահատվածում սպասվում է գյուղատնտեսական արտադրության աճ: 2017 թվականին համախառն ցորենահավաքը կավելանա 2%-ով մինչև 107 մլն. տոննա, շաքարի ճակնդեղինը՝ 15%-ով մինչև 38,5 մլն տոննա՝ 11%-ով ցանքատարածության աճի դեպքում, յուղատու մշակաբույսերինը՝ 5%-ով մինչև 14,5 մլն տոննա, բանջարեղենինը՝ 4%-ով մինչև 16 մլն տոննա, բոստանային մշակաբույսերինը՝ 5%-ով մինչև 1,5 մլն. տոննա՝ 17%-ով ցանքատարածության աճի դեպքում, պտուղներինը եւ հատապտուղներինը՝ 3%-ով մինչև 3,1 մլն տոննա՝ 4%-ով ցանքատարածության աճի դեպքում:

Սպասվում է 1%-ով մինչև 31 մլն տոննա կաթի, 9%-ով մինչև 3,2 մլն տոննա խոզի մսի՝ 14%-ով մինչև 22,2 մլն խոզերի գլխաքանակի աճի դեպքում, 14%-ով մինչև 4,7 մլն. տոննա թռչնամսի՝ 12%-ով մինչև 594 մլն թռչունների գլխաքանակի աճի դեպքում, 1%-ով մինչև 207 հազ տոննա ոչխարի մսի՝ 2%-ով մինչև 25,2 մլն գլխաքանակի աճի դեպքում արտադրության աճ: Ընդ որում, կանխատեսվում է տավարի մսի արտադրության նվազում 1,5%-ով մինչև 1,63 մլն տոննա՝ կովերի գլխաքանակի 341 հազ.-ով մինչև 8,19 մլն կրճատման դեպքում:


Համաձայն կանխատեսումների՝ 2017 թվականին խոզի մսի, ոչխարի մսի, թռչնամսի, ձվի, հացահատիկի

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը



2015-2017 թթ.՝ գնահատում 2015 թվականի միջին տարեկան փոխարժեքով:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն, հազ. տոննա




և կարտոֆիլի շուկաները կրնաթագրվեն սեփական արտադրության արտադրանքով ապահովվածության բարձր մակարդակով:

Հաշվի առնելով Միության երկրներից մատակարարումները՝ կաթով ինքնաապահովվածության մակարդակը կկազմի 96%, բանջարեղենով՝ 89%: Կպահպանվի երրորդ երկրներից տավարի մսի մատակարարումներից կախվածությունը (սպառման 18%-ի չափով), ինչպես նաև պտուղ-հատապտղային խմբի մասով (35%-ով):

Սպասվում է գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման՝ 5,8%-ով մինչև ավելի քան 20,1 մլրդ. դոլար աճ՝ Միության երկրներ 3 մլրդ դոլարից ավելի ծավալով մատակարարումների պահպանման դեպքում: Կանխատեսվում է 16%-ով մինչև 35 մլն տոննա հացահատիկի, 2,6 անգամ մինչև 100 հազ տոննա կարտոֆիլի, մինչև 99 հազ. տոննա բանջարեղենի, 2 անգամ մինչև 115 հազ տոննա թռչնամսի արտահանման ավելացում: Բուսական յուղերի, կաթի եւ կաթնամթերքի արտահանման հետ կապված մատակարարումները կպահպանվեն համապատասխանաբար 2,3 մլն տոննա եւ 620 հազ. տոննա մակարդակի վրա:

Կանխատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծման արժեքային ծավալների՝ 30%-ով մինչև 28 մլրդ դոլար կրճատում, ընդ որում՝ Միության երկրներից մատակարարումները կպահպանվեն 4,1 մլրդ դոլար

Անասուն եւ թռչուն սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա




Պարենով ապահովվածության մակարդակի կանխատեսումը 2017 թվականին, %

Արտադրանքը	Սեփական արտադրության հաշվին	Հաշվի առնելով արտադրությունը եւ մատակարարումները Միությունից
տավարի միս	73,0	3,3
խոզի միս	92,8	93,2
ոչխարի միս	99,9	100,6
թռչնամիս	100,1	102,6
կաթ	82,6	95,5
ձու	98,6	100,7
հացահատիկ	146,7	146,9
կարտոֆիլ	97,9	98,4
բանջարեղեն	88,8	88,9
պտուղ եւ հատապտուղ	64,7	64,7


մակարդակից բարձր: Սպասվում է կարտոֆիլի ներմուծման ֆիզիկական ծավալների՝ 16%-ով մինչև 800 հազ տոննա աճ: Բանջարեղենի մատակարարումները կնվազեն 13%-ով մինչև 2,1 մլն տոննա: Բուսական յուղերի մատակարարումները կկրճատվեն 7%-ով մինչև 800 հազ. տոննա, պտուղներինը և հատապտուղներինը՝ 19%-ով մինչև 1,7 մլն տոննա:

Մսի և մսամթերքի ներմուծումը կկրճատվի 45%-ով մինչև 1,07 մլն տոննա, կաթինը և կաթնամթերքինը՝ 15%-ով մինչև 7 մլն տոննա՝ հիմնականում երրորդ երկրներից մատակարարումների կրճատման հաշվին: Միության երկրներից մսի և մսամթերքի մատակարարումները կպահպանվեն 350 հազ. տոննա մակարդակի վրա, կաթի և կաթնամթերքի մատակարարումները կավելանան 28%-ով մինչև 4,85 մլն. տոննա:

Միության երկրներ գ/տ արտադրանքի արտահանման և դուրսբերման կանխատեսումը, մլն. դոլար



Միության երկրներից գ/տ արտադրանքի ներմուծման և ներսբերման կանխատեսումը, մլն. դոլար




Գյուղատնտեսության հիմնական կապիտալի մեջ ներդրումները աճելու են եւ 2017 թվականին կկազմեն ավելի քան 670 մլրդ ռուբլի:


2017 թվականին միջին ամսական աշխատավարձը գյուղատնտեսությունում կկազմի 16,9 հազ. ռուբլի (համարժեք է 279 դոլարին) կամ ամբողջ տնտեսության կտրվածքով միջին ամսական աշխատավարձի 42%-ը (2014 թվականին՝ 55%-ը):

Նախատեսվում է հանքային պարարտանյութերի ներմուծման ամենամյա ավելացում, տրակտորներով եւ կոմբայներով ապահովվածության տեսակարար ցուցանիշները կմնան 2015 թվականի մակարդակի վրա: Բուսաբուծական արտադրանքի շահութաբերության ներկայիս մակարդակը կազմում է 38,4%, անասնաբուծական արտադրանքինը՝ 19%:

Միության երկրների շուկա գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումն ու դուրսբերումը, հազ. տոննա



Միության երկրներից գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումն ու ներսբերումը, հազ. տոննա



**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հա-ի
համար, եւ հանքային պարարտանյութերի՝
կգ/հա գ/տ հողեր, ներմուծման
տեսակարար ցուցանիշները**

Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	5,9	5,8	-	-
Հացահատիկահավաք կոմբայններ	2,7	2,6	-	-
Կերահավաք կոմբայններ	1,2	1,2	-	-
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով, կգ/հա	32,0	33,0	34,0	35,0


1.2.6. Եվրասիական տնտեսական միություն

Կանխատեսումային ժամանակահատվածում սպասվում է գյուղատնտեսական արտադրության աճ:

2017 թվականին համախառն ցորենահավաքը կաճի 3%-ով մինչև 138,1 մլն տոննա՝ 3,5%-ով ցանքատարածության ավելացման դեպքում, շաքարի ճակնդեղինը՝ 14%-ով մինչև 44 մլն տոննա՝ 11%-ով ցանքատարածության ավելացման դեպքում, յուղատու մշակաբույսերինը՝ 5%-ով մինչև 17 մլն տոննա, բանջարեղենինը՝ 3%-ով մինչև 23,2 մլն տոննա, պտուղներինը եւ հատապտուղներինը՝ 3%-ով մինչև 4,5 մլն տոննա՝ 1,5%-ով տնկատարածության ավելացման դեպքում: Բոստանային մշակաբույսերի արտադրությունը կկրճատվի 6%-ով մինչև 3,6 մլն տոննա: Կարտոֆիլի արտադրությունը կպահպանվի ներկայիս մակարդակի վրա (ավելի քան 43 մլն տոննա):


Սպասվում է 4%-ով մինչև 46,5 մլն տոննա կաթի, 3%-ով մինչև 2,58 մլն տոննա տավարի մսի՝ 1,5%-ով մինչև 14,1 մլն կովերի գլխաքանակի ավելացման դեպքում արտադրության աճ: Թռչնամսի արտադրությունը կավելանա 14%-ով մինչև 5,4 մլն տոննա: Կանխատեսվում է խոզի մսի արտադրության աճ 9%-ով՝ մինչև 3,79 մլն տոննա: Տավարի մսի արտադրությունը կավելանա 6%-ով մինչև 471 հազ. տոննա:

Գյուղատնտեսական արտադրանք, մլն. դոլար




2015-2017 թթ.՝ գնահատում 2015 թվականի միջին տարեկան փոխարժեքով:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, հազ. տոննա



Միության լրիվ ինքնաապահովվածությունը պարենով, հաշվի առնելով փոխադարձ մատակարարումները, 2017 թվականին կանխատեսվում է ոչխարի մսի, թռչնամսի, կաթի, ձվի, հացահատիկի, կարտոֆիլի եւ բանջարեղենի մասով:

Անասուն եւ թռչուն՝ սպանդի համար (սպանդային քաշով)՝ հազ. տոննա



Անհրաժեշտ է նշել Միության մեծ կախվածությունը պտուղների եւ հատապտուղների ներմուծումից՝ ինձորի եւ տանձի սպառման մեկ երրորդը մատակարարվում է երրորդ երկրներից:

Ազգային արժույթների արժեքազրկման պատճառով 2017 թվականի արդյունքներով սպասվում է գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման ծավալների պահպանում 2014 թվականի մակարդակի վրա: Ընդ որում, փոխադարձ մատակարարումների մասնաբաժինը արտահանման կառուցվածքում կնվազի 1,8 տոկոսային կետով եւ կկազմի շուրջ 30%:

Սպասվում է բանջարեղենի փոխադարձ առևտրի ֆիզիկական ծավալների աճ (հաշվի չառնելով վերաարտահանման ծավալները)՝ 40%-ով մինչեւ 0,5 մլն. տոննա, կարտոֆիլինը՝ 52%-ով մինչեւ 377 հազ տոննա, խաղողինը՝ 2 անգամ մինչեւ

Պարենով ինքնաապահովվածության մակարդակի կանխատեսումը 2017 թվականին, %


Արտադրանքը	Բնակչության մեկ շնչին ընկնող սպառումը, կգ/մարդ	Ինքնաապահովվածության մակարդակը, %
տավարի միս	16,1	83,7
խոզի միս	21,6	93,5
ոչխարի միս	2,6	101,7
թռչնամիս	30,3	100,3
կաթ	261,4	95,6
ձու, հատ/մարդ	282,7	101,4
հացահատիկ	537,4	138,3
կարտոֆիլ	239,5	98,7
բանջարեղեն	138,8	90,4
պտուղ եւ հատապտուղ	35,7	68,2
բուս. յուղեր	23,3	131,5
շաքար	35,9	99,0

22 հազ. տոննա, մսինը եւ մսամթերքինը՝ 15%-ով մինչեւ 506,9 հազ. տոննա, կաթինը եւ կաթնամթերքինը՝ 23%-ով մինչեւ 5,2 մլն. տոննա: Կանխատեսվում է 6%-ով մինչեւ 272 հազ. տոննա բուսական յուղերի, 38%-ով մինչ. 250 հազ. տոննա շաքարի, 22,1%-ով մինչեւ 930 հազ տոննա հացահատիկի փոխադարձ մատակարարումների նվազում:


Միության երկրները կավելացնեն երրորդ երկրներ հացահատիկի մատակարարումները 17%-ով մինչեւ 39,6 մլն տոննա, կարտոֆիլինը՝ 2 անգամ մինչեւ 121 հազ տոննա, բանջարեղենինը՝ 3,2 անգամ մինչեւ 140 հազ տոննա, պտուղներինը եւ հատապտուղներինը՝ 8 անգամ մինչեւ 16 հազ տոննա, մսինը եւ մսամթերքինը՝ 43%-ով մինչեւ 180 հազ. տոննա՝ առաջին հերթին թոչնամսի մատակարարումների՝ 2,5 անգամ մինչեւ 90 հազ. տոննա ավելացման հաշվին: Կաթի արտահանումը կավելանա 43%-ով մինչեւ 633 հազ. տոննա:

Սպասվում է ներմուծման հետ կապված մատակարարումների՝ 28%-ով մինչեւ 37,2 մլրդ դոլար կրճատում: Կանխատեսվում է երրորդ երկրներից կարտոֆիլի, բանջարեղենի, բուսական յուղի, մսի եւ մսամթերքի, ինչպես նաեւ կաթի եւ կաթնամթերքի ներմուծման կրճատում:

Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի արտահանման եւ փոխադարձ առևտրի կանխատեսումը, մլն դոլար



Գ/տ արտադրանքի եւ պարենի ներմուծման ու փոխադարձ առևտրի կանխատեսումը, մլն. դոլար




2015-2017 թվականների ժամանակահատվածում 2015 թվականի միջին տարեկան փոխարժեքով հիմնական կապիտալի մեջ ներդրումները կավելանան 7,5%-ով մինչև 12,8 մլրդ դոլար:

Գյուղատնտեսությունում միջին տարեկան աշխատավարձի եւ ամբողջ տնտեսության կտրվածքով միջին ամսական աշխատավարձի հարաբերակցությունը կնվազի 55%-ից մինչև 43%:


Անհրաժեշտ է նշել 2014-2015 թվականներին գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության տեսակարար ցուցանիշների կրճատումն ու գյուղատնտեսական կազմակերպություններում մինչև 2017 թվականի սկիզբը հանքային պարարտանյութերի ներմուծման տեսակարար ցուցանիշի ավելացումը մինչև 40 կգ ազոտոլ նյութ 1 հա գյուղատնտեսական հողերի համար:

2015 թվականի արդյունքներով շահութաբերության միջին կշռված ցուցանիշը գնահատվում է բուսաբուծական արտադրանքի մասով 34,5%, անասնաբուծական արտադրանքի մասով՝ 18,5%:

Գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների արտահանումը, հազ տոննա



Գ/տ արտադրանքի եւ պարենի առանձին տեսակների ներմուծումը, հազ. տոննա



**Գյուղատնտեսական տեխնիկայով
ապահովվածության՝ հատ հազ. հա-ի
համար, եւ հանքային պարարտանյութերի՝
կգ/հա գ/տ հողեր, ներմուծման
տեսակարար ցուցանիշները**

Ցուցանիշ	2014	2015	2016	2017
Տրակտորներ	6,5	6,4	-	-
Հացահատիկահավաք կոմբայններ	2,9	2,8	-	-
Կերահավաք կոմբայններ	1,1	1.1	-	-
Հանքային պարարտանյութերի ներմուծում՝ սննդարար նյութերի 100%-ի վերահաշվարկով, կգ/հա	34,0	33,2	38,9	39,7

**Բաժին 2. Հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի
թիվ 22 հանձնարարականով սահմանված՝ գյուղատնտեսական
արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների նկատմամբ
պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումները**

ԵՍՏՄ անդամ պետությունների եւ առհասարակ Միության ազգային ագրոարդյունաբերական համալիրների զարգացման կատարված գնահատումը թույլ է տալիս միջնաժամկետ հեռանկարում որոշել ոլորտի զարգացման հեռանկարները՝ կողմերի կողմից Միության երկրների գերակայությունների եւ նպատակային ցուցիչների ընկալման, ազգային ագրոարդյունաբերական քաղաքականությունների համակարգման հիման վրա պարենային անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության միջոցառումների մշակման եւ իրականացման նպատակով:

Դրա հետ մեկտեղ ԵՍՏՄ անդամ պետությունների ընդհանուր ագրարային շուկայի զարգացումը կնպաստի անվտանգ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի նկատմամբ Միության քաղաքացիների պահանջումների կայուն բավարարմանը, ինչը հիմնականում ապահովվում է Միության ներսում արտադրության հաշվին: Բացի այդ, երկրներից յուրաքանչյուրի պարենային անվտանգության ապահովման եւ առհասարակ ինտեգրացիոն ձեւավորման կարելուր խնդիրը մթերային ներքին շուկաների հավասարակշռված գործունեության ապահովումն է: Այդ առումով գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների փոխադարձ մատակարարումների աճի կամ նվազման հեռանկարների գնահատման արդյունավետ մեխանիզմ է համարվում գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների նկատմամբ պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումների մշակումը:

Պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումները ձեւավորված են հաշվարկման միասնական մեթոդաբանությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հետեւյալ 11 տեսակների վերաբերյալ ԵՍՏՄ անդամ

պետությունների ազգային լիազորված մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա՝ հացահատիկ, միս եւ մսամթերք, տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, թռչնամիս, կաթ եւ կաթնամթերք, շաքար, բուսայտղ, կարտոֆիլ եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ, ձու եւ ձվամթերք:

Պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների ձևավորումը թույլ է տալիս ապահովել գյուղատնտեսական արտադրանքի, հումքի եւ պարենի պահանջմունքների փոխկապումը ազգային արտադրողների հնարավորությունների, Միության անդամ պետությունների փոխադարձ եւ արտաքին առևտրի հետ, ինչպես նաև բացահայտել անհամամասնությունների առաջացման դեպքում հնարավոր ռիսկերը եւ սպառնալիքները՝ դրանք վերացնելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումները ձևավորված են անդամ պետություններից Հանձնաժողով ստացված համատեղ կանխատեսումների հիման վրա՝ բացառությամբ Ղրղզստանի Հանրապետության, որի վերաբերյալ տվյալները ներկայացված են ըստ Հանձնաժողովի ագրոարդյունաբերական քաղաքականության դեպարտամենտի գնահատականի:

2.1. ՀԱՑԱՀԱՏԻԿ

Միության անդամ պետություններում հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն 2017 թվականի սկզբին 2014 թվականի համեմատ սպասվում է հացահատիկի համախառն բերքի ընդհանուր աճ՝ 4,1 մլն տոննայով կամ 3,0%-ով: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտադրության ծավալը կկազմի 134,6 մլն տոննա:

Միության անդամ պետություններում հացահատիկի արտադրությունը, *հազ. տոննա*

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	134 078,0	129 564,9	134 625,0	138 154,4
Հայաստան	590,5	637,9	675,3	688,3
Բելառուս	9 564,2	8 657,0	8 798,0	9 070,0
Ղազախստան	17 162,2	18 673,7	19 526,4	19 741,1
Ղրղզստան	1 445,9	1 596,3	1 625,3	1 655,0
Ռուսաստան	105 315,2	100 000,0	104 000,0	107 000,0

Միությունում հացահատիկի հիմնական արտադրողներն են Ռուսաստանը եւ Ղազախստանը, որոնց բաժին է ընկնում ամբողջ արտադրության 90%-ից ավելին:

Ղազախստանում 2014 թվականի համեմատ սպասվում է արտադրության աճ 15,0%-ով մինչեւ 19,7 մլն տոննա, Ռուսաստանում՝ 1,6%-ով մինչեւ 107,0 մլն տոննա, Ղրղզստանում՝ 14,5%-ով մինչեւ 1,7 մլն տոննա, Հայաստանում՝ 16,6%-ով մինչեւ 0,7 մլն տոննա:

Հացահատիկի **արտահանումը** անասնաբուծական նպատակներով ներքին սպառման հետ մեկտեղ հացահատիկի շուկայի զարգացման որոշիչ գործոն է համարվում, քանի որ արտահանման է ուղղվում արտադրված հացահատիկի մինչեւ 30%-ը: 2014 թվականին Միության անդամ պետություններից հացահատիկի արտահանման նպատակով մատակարարումների ամբողջական ծավալը կազմել է 34,0 մլն տոննա:

Ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն 2017 թվականի սկզբին սպասվում է հացահատիկի արտահանման ավելացում 16,5%-ով մինչև 39,6 մլն տոննա: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտահանման ծավալը կկազմի 37,7 մլն. տոննա: Հացահատիկի առաջարկը երրորդ երկրների շուկաներ ապահովված է Ռուսաստանի եւ Ղազախստանի կողմից:

Հացահատիկի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	33 957,4	34 182,7	37 651,2	39 561,8
Հայաստան	0,2	0,002	-	-
Բելառուս	0,05	2,3	40,1	20,1
Ղազախստան	4 114,3	3 568,4	4 999,0	4 940,0
Ղրղզստան	0,2	0,1	1,0	1,0
Ռուսաստան	29 842,6	30 611,9	32 611,1	34 600,7

Հացահատիկի ներմուծումը Միության անդամ պետություններ աննշան է. դրա մասնաբաժինը ներքին սպառման մեջ չի գերազանցում 1%-ը: Միության անդամ պետություններում հացահատիկի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն 2017 թվականի սկզբին սպասվում է հացահատիկի ամբողջական ն-երմուծման պահպանում 2014 թվականի մակարդակում:

Հացահատիկի ներմուծման աճ ըստ կանխատեսման նկատվում է Ռուսաստանում՝ 1,7 անգամ 2017 թվականին՝ 2014 թվականի համեմատ: Մինչդեռ Միության մյուս անդամ պետություններում նախատեսվում է հացահատիկի ներմուծման նվազում:

Միության անդամ պետությունների հացահատիկի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	910,4	999,0	929,3	914,8
Հայաստան	198,6	45,9	35,7	32,5
Բելառուս	163,6	75,8	65,0	50,0
Ղազախստան	52,3	20,2	14,6	9,4
Ղրղզստան	5,3	2,8	4,0	3,0
Ռուսաստան	490,6	854,3	810,0	819,9

Ընդհանուր առմամբ, Միությունում հացահատիկի սպառման շուկան կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում գնահատվում է մոտ 100,0 մլն տոննա: Ներքին օգտագործման աճը 2017 թվականին կկազմի 7,5%՝ հաշվետու 2014 թվականի համեմատ:

Միության անդամ պետությունների մասով պլանավորված ժամանակահատվածում հացահատիկայինների ներքին շուկայի աճ է նկատվում բոլոր երկրներում՝ բացառությամբ Ղրղզստանի Հանրապետության, որտեղ հացահատիկի օգտագործումը 2017 թվականին կկազմի 2,0 մլն տոննա, ինչը 10%-ով պակաս է 2014 թվականի ցուցանիշից:

Միության անդամ պետությունների՝

հացահատիկի սպառման ներքին շուկան, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	92 928,3	96 987,2	97 502,5	99 866,6
Հայաստան	945,5	846,4	993,0	1 013,0
Բելառուս	8 436,2	9 394,0	8 685,3	8 755,2
Ղազախստան	12 802,2	13 913,1	14 429,0	15 129,0
Ղրղզստան	2 237,2	2 009,7	1 996,8	2 010,4
Ռուսաստան	68 507,1	70 824,0	71 398,4	72 959,0

Միության անդամ պետությունների՝ հացահատիկի փոխադարձ առևտուրը բնութագրվում է Ռուսաստանի կողմից Ղազախստան եւ Բելառուսի կողմից Ռուսաստան ներքին շուկայում հացահատիկի հավելորդային առաջարկով: Այսպիսով, 2016-2017թթ.-ին Ղազախստանը պլանավորում է Ռուսաստանից տարեկան 30 հազ. տոննա ծավալի ներկրում կատարել, ընդ որում՝ Ռուսաստանի առաջարկը կազմում է համապատասխանաբար 175 եւ 185 հազ. տոննա. Ռուսաստանը պլանավորում է Բելառուսից տարեկան հազար տոննայի ներկրում կատարել, ընդ որում՝ Բելառուսի առաջարկը 2016 թվականին կազմում է 40 հազ. տոննա, իսկ 2017 թվականին՝ 30 հազ. տոննա:

Գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան՝ ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում՝ ներքին շուկայում իրացման համար նախատեսվող արտադրանքի ծավալներով Ռուսաստանի արտահանման ներուժի ավելացման մասով:

**Միության անդամ պետությունների՝ հացահատիկի փոխադարձ
առևտուրը. ներմուծում (պահանջարկ) հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	1 193,9	1 161,0	929,3	930,0
Հայաստան	195,6	211,5	310,0	300,0
Բելառուս	21,2	8,1	35,0	50,0
Ղազախստան	54,0	160,1	35,4	40,6
Ղրղզստան	481,8	358,6	358,9	359,3
Ռուսաստան	441,3	422,6	190,0	180,1

Միության անդամ պետությունների՝ հացահատիկի փոխադարձ
առևտուրը. արտահանում (առաջարկ) *հազ. տոննա*

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	1 193,9	1 161,0	929,3	930,0
Հայաստան	-	-	-	-
Բելառուս	1,2	45,4	40,0	30,0
Ղազախստան	914,6	727,4	500,0	500,0
Ղրղզստան	0,1	0,1	0,4	0,7
Ռուսաստան	278,0	388,1	388,9	399,3

Եվրասիական տնտեսական միությունն իր սեփական արտադրության հաշվին ամբողջությամբ բավարարում է հացահատիկի ներքին պահանջմունքը: 2017 թվականի սկզբին այդ ցուցանիշը, համաձայն պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսմանը,

Սեփական արտադրության հացահատիկով ապահովվածության
մակարդակը, %

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	144,3	133,6	138,1	138,3
Հայաստան	62,5	75,4	68,0	67,9
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>83,1</i>	<i>100,4</i>	<i>99,2</i>	<i>97,6</i>
Բելառուս	113,4	92,2	101,3	103,6
Ղազախստան	134,1	134,2	135,3	130,5
Ղրղզստան	64,6	79,4	81,4	82,3
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>86,2</i>	<i>97,3</i>	<i>99,4</i>	<i>100,2</i>
Ռուսաստան	153,7	141,2	145,7	146,7

Ինքնաապահովվածության առավելագույն մակարդակ է նախատեսվում Ռուսաստանում եւ Ղազախստանում՝ համապատասխանաբար 147% եւ 131%, Բելառուսում՝ 104%: Հայաստանը, հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները, կարող է դուրս գալ հացահատիկի գրեթե ամբողջական ինքնաապահովման մակարդակի վրա, իսկ Ղրղզստանը՝ ամբողջական ինքնաապահովման:

Ընդհանուր առմամբ Միության անդամ պետությունների՝ հացահատիկի շուկայի կանխատեսումը 2016-2017թթ.-ի համար, հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը, ամբողջությամբ ապահովվում է սեփական արտադրությամբ եւ թույլ է տալիս մինչեւ 30-35 մլն տոննա ավելացնել արտահանման ներուժը:

Այսպիսով, Միության անդամ պետությունների կառավարությունների համար տվյալ ոլորտի արտահանման քաղաքականությանը զուգահեռ նպատակահարմար է իրականացնել հացահատիկային ոլորտի դիվերսիֆիկացման քաղաքականություն հացահատիկի խորացված վերամշակման հետ կապված արտադրությունների շինարարության մասով, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու արտադրական ռեսուրսներում ներմուծման բաղադրիչը (անասնաբուծությունում՝ անասնակերը, վերամշակող ոլորտում՝ սննդային բաղադրիչները եւ այլն), ինչպես նաեւ ավելացնելու արտաքին շուկայում Միության անդամ պետությունների՝ բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքով մասնակցությունը:

2.2. ՄԻՍ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔ

Միության անդամ պետություններում մսի եւ մսամթերքի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է մսի արտադրության ընդհանուր աճ՝ 1 004,7 հազ. տոննայով կամ 8,9%-ով:

Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտադրության ծավալը կկազմի 12 105,8 հազ. տոննա:

Միության անդամ պետություններում մսի արտադրությունը, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	11 339,4	11 863,3	12 105,8	12 344,1
Հայաստան	92,7	99,9	107,6	112,6
Բելառուս	1 073,3	1 150,3	1 158,0	1 171,0
Ղազախստան	900,2	931,0	952,0	966,3
Ղրղզստան	202,8	208,9	211,3	215,7
Ռուսաստան	9 070,4	9 473,2	9 676,9	9 878,5

Արտադրության ամենամեծ աճը 2017 թվականին սպասվում է Հայաստանում՝ 21,5%-ով՝ 2014 թվականի մակարդակի համեմատ, մինչեւ 112,6 հազ. տոննա, Բելառուսում եւ Ռուսաստանում՝ 9%-ով մինչեւ համապատասխանաբար 171,0 եւ 9 878,5 հազ. տոննա, Ղազախստանում՝ 7,3%-ով մինչեւ 966,3 հազ. տոննա, Ղրղզստանում՝ 6,4%-ով մինչեւ 215,7 հազ. տոննա:

Միության անդամ պետություններից մսի եւ մսամթերքի արտահանումը 2014 թվականին կազմել է 125,6 հազ. տոննա: Կանխատեսման համաձայն 2017 թվականի սկզբին սպասվում է մսի եւ մսամթերքի արտահանման աճ 43,2%-ով մինչեւ 179,9 հազ. տոննա: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտահանման ծավալը կկազմի 146,2 հազ. տոննա:

Մսի եւ մսամթերքի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	125,6	93,8	146,2	179,9
Հայաստան	1,12	1,13	0,9	0,8
Բելառուս	0,7	3,0	30,5	47,3
Ղազախստան	1,0	1,2	14,9	15,3
Ղրղզստան	72,5	29,8	25,4	22,9
Ռուսաստան	50,3	58,7	74,5	93,6

Ընդհանուր առմամբ մսի եւ մսամթերքի ներքին սպառման մեջ **ներմուծման մասնաբաժինը** Միությունում 2017 թվականին 2014 թվականի համեմատ զգալիորեն կնվազի՝ 14,9-ից մինչեւ 7,1%: Կանխատեսման համաձայն՝ Միության անդամ պետություններում 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է մսի եւ մսամթերքի ամբողջական ներմուծման զգալի նվազում՝ 1 048,6 հազ. տոննայով կամ 53%-ով:

Ըստ կանխատեսման՝ մսի եւ մսամթերքի ներմուծման անկում 2017 թվականի սկզբին նկատվում է Միության բոլոր անդամ պետություններում:

Միության անդամ պետությունների՝ մսի եւ մսամթերքի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	1 977,3	1 282,2	957,0	928,7
Հայաստան	56,3	50,8	9,5	5,0
Բելառուս	74,7	27,2	33,0	33,0
Ղազախստան	175,4	152,5	112,7	107,8
Ղրղզստան	63,5	60,7	58,9	58,2
Ռուսաստան	1 607,4	991,0	742,9	724,7

Ընդհանուր առմամբ Միությունում մսի եւ մսամթերքի սպառման շուկան կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում գնահատվում է տարեկան մոտ **13 մլն տոննա**: 2017 թվականին հաշվետու 2014 թվականի համեմատ սպասվում է ներքին օգտագործման աննշան նվազում (1,3%-ով):

Միության անդամ պետությունների՝ մսի եւ մսամթերքի սպառման ներքին շուկան, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	13 294,9	13 038,5	13 083,2	13 122,8
Հայաստան	140,1	143,7	147,7	150,8
Բելառուս	829,5	850,8	832,1	825,5
Ղազախստան	1 177,4	1 121,7	1 088,0	1 089,3
Ղրղզստան	193,9	199,8	204,6	210,3
Ռուսաստան	10 953,9	10 722,5	10 810,8	10 846,9

Միության անդամ պետություններում պլանավորվող ժամանակահատվածում մսի եւ մսամթերքի ներքին շուկայի անկումը պայմանավորված է Ռուսաստանի եւ Ղազախստանի շուկայի 2017 թվականին՝ 2014 թվականի համեմատ անկմամբ՝ համապատասխանաբար 1,0% եւ 7,5%-ով: Աննշան կնվազի ներքին սպառումը Բելառուսում՝ 0,5%-ով:

Ղրղզստանում եւ Հայաստանում կարճանազրվի մսի եւ մսամթերքի սպառման շուկայի աճ՝ համապատասխանաբար 8,5% եւ 7,6%-ով:

Կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում **փոխադարձ առեւտուրը**, Միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումների համաձայն, բնութագրվում է բոլոր անդամ պետությունների կողմից **հավելորդային առաջարկով**:

Այսպիսով, Ռուսաստանը պլանավորում է Ղազախստանից ներկրել 2016 թվականին 12,0 հազ. տոննա, 2017 թվականին 12,7 հազ. տոննա, իսկ

Ղազախստանը կանխատեսում է Ռուսաստան արտահանել համապատասխանաբար 15,0 եւ 19,2 հազ. տոննա: Ղրղզստանը կանխատեսում է կատարել մատակարարումներ Ղազախստան, ընդ որում՝ Ղազախստանում բացակայում է դրա պահանջարկը:

Միեւնույն ժամանակ Ռուսաստանի առաջարկը Հայաստանի համար զգալիորեն փոքր է դրա պահանջարկից: Այսպիսով, Ռուսաստանից Հայաստանի՝ 2016 թվականին 22,0 հազ. տոննա եւ 2017 թվականին 25,5 հազ. տոննա ծավալի պահանջարկի դեպքում Ռուսաստանի առաջարկը Հայաստանի համար կազմում է ընդամենը համապատասխանաբար 0,8 եւ 0,9 հազ. տոննա:

Գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան՝ ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում երրորդ երկրների հետ արտաքին առևտրի նկատմամբ փոխադարձ առևտրի գերակայության հիման վրա: Կատարված հավասարակշռման արդյունքում Բելառուսի եւ Ղրղզստանի պահանջարկը հաշվի է առնվել ամբողջ ծավալով: Հաշվի առնելով Բելառուսից եւ Ղազախստանից, ինչպես նաեւ Հայաստանից եւ Ղրղզստանից Ռուսաստանի համար հավելուրդային առաջարկը՝ Ռուսաստանի ներմուծումը նվազեցվել է 8,6 հազ. տոննայով 2016 թվականին եւ 12,4 հազ. տոննայով 2017 թվականին: Ղրղզստանի առաջարկը Ղազախստանի համար ամբողջությամբ հաշվի է առնվել, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու երրորդ երկրներից ներմուծումը Ղազախստան 2016 թվականին 53,7 հազ. տոննայով, 2017 թվականին 54,2 հազ. տոննայով:

Միության անդամ պետությունների՝ մսի եւ մսամթերքի փոխադարձ
առեւտուր. ներսերումը (պահանջարկը) հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	441,1	473,5	494,9	506,9
Հայաստան	0,1	0,6	35,0	40,5
Բելառուս	13,1	4,0	13,5	13,5
Ղազախստան	76,8	127,9	100,2	97,7
Ղրղզստան	2,4	3,5	4,1	4,4
Ռուսաստան	348,7	337,5	342,1	350,8

Միության անդամ պետությունների՝ մսի եւ մսամթերքի փոխադարձ
առեւտուրը. արտահանում (առաջարկ) հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	441,1	473,5	494,9	506,9
Հայաստան	0,001	0,013	2,7	5,7
Բելառուս	345,1	332,4	346,9	349,7
Ղազախստան	10,7	13,2	15,4	19,7
Ղրղզստան	0,3	43,5	44,4	45,3
Ռուսաստան	85,0	84,3	85,5	86,5

Օանդթագրություններ. 1. Բելառուսի եւ Ռուսաստանի միջեւ փոխադարձ առեւտուրը նշված է՝ հաշվի առնելով Միութենական պետության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

2. Ղրղզստանի ներսերման (պահանջարկի) մասով տվյալները բերված են անդամ պետությունների կանխատեսումների համաձայն:

Ներկայումս մսի արտադրության գումարային ծավալը թույլ չի տալիս սեփական արտադրությամբ ամբողջությամբ ապահովել ներքին պահանջումը. 2014 թվականին ինքնաապահովվածությունը կազմել է **85,3%**: 2017 թվականի սկզբին այդ ցուցանիշը կավելանա եւ կհասնի **94,1%-ի**:

Սեփական արտադրության մտվ ապահովվածության մակարդակը, %

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	85,3	91,0	92,5	94,1
Հայաստան	66,2	69,5	72,9	74,7
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>66,2</i>	<i>69,9</i>	<i>96,5</i>	<i>101,5</i>
Բելառուս	129,4	135,2	139,2	141,9
Ղազախստան	76,5	83,0	87,5	88,7
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>83,0</i>	<i>94,4</i>	<i>96,7</i>	<i>97,7</i>
Ղրղզստան	104,6	104,6	103,3	102,6
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>105,8</i>	<i>106,3</i>	<i>105,3</i>	<i>104,7</i>
Ռուսաստան	82,8	88,3	89,5	91,1
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>86,0</i>	<i>91,5</i>	<i>92,7</i>	<i>94,3</i>

Ինքնաապահովվածության առավելագույն մակարդակ 2017 թվականին ենթադրվում է Բելառուսում՝ 142%: Ղրղզստանն ամբողջությամբ ապահովված է սեփական արտադրությամբ: Հայաստանում այդ ցուցանիշը կկազմի 74,7%, սակայն հաշվի առնելով փոխադարձ առևտուրը (ներսերումը)՝ պետությունը դառնում է անկախ երրորդ երկրներից մսի եւ մսամթերքի մատակարարումից: Ռուսաստանում ինքնաապահովվածության մակարդակը կկազմի 91,1% (հաշվի առնելով փոխադարձ առևտուրը (ներսերումը)՝ 94,3%), Ղազախստանում՝ 88,7% (հաշվի առնելով փոխադարձ առևտուրը (ներսերումը)՝ 97,7%):

Կանխատեսումային ցուցանիշների համաձայն Եվրասիական տնտեսական միության՝ մսի եւ մսամթերքի շուկան ներդրումների համար գրավիչ է համարվում՝ 1,0 մլն տոննա ծավալի տարեկան ներմուծման հետ կապված:

2.2.1. ՏԱՎԱՐԻ ՄԻՍ

Տավարի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ Միության անդամ պետություններում 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը. կանխատեսում չի ներկայացվել) սպասվում է տավարի մսի արտադրության ընդհանուր աճ՝ 57,2 հազ. տոննայով կամ 2,4%-ով: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտադրության ծավալը կկազմի 2 456,3 հազ. տոննա:

Միության անդամ պետություններում տավարի մսի արտադրությունը, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	2 414,3	2 444,8	2 456,3	2 471,5
Հայաստան	59,0	63,6	68,6	71,7
Բելառուս	295,7	338,0	333,0	335,0
Ղազախստան	405,5	417,0	430,2	435,0
Ռուսաստան	1 654,1	1 626,2	1 624,5	1 629,8

Արտադրության անկում կանխատեսվում է Ռուսաստանի Դաշնությունում՝ 1,5%-ով կամ 24,3 հազ. տոննայով: Մնացած անդամ պետություններում կանխատեսվում է աճ:

Տավարի մսի արտադրության առավելագույն աճ է սպասվում Հայաստանում՝ 21,5%-ով մինչև 71,7 հազ. տոննա, Բելառուսում՝ 13,3%-ով մինչև 335,0 հազ. տոննա, Ղազախստանում՝ 7,3%-ով մինչև 435,0 հազ. տոննա:

Միության անդամ պետությունների՝ տավարի մսի **արտահանումն** աննշան է. 2014 թվականին այն կազմել է 1,7 հազ. տոննա: Կանխատեսման համաձայն՝ 2017 թվականի սկզբին սպասվում է տավարի մսի արտահանման ավելացում մինչև 8,6 հազ. տոննա՝ Ղազախստանի Հանրապետության մատակարարումների ծավալների աճի հաշվին:

Տավարի մսի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵՍՏՍ	1,7	1,3	8,8	8,6
Հայաստան	0	0	0,5	0,3
Բելառուս	0,1	0,1	0,3	0,3
Ղազախստան	0,03	0	7,0	7,5
Ռուսաստան	1,6	1,2	1,0	0,5

Տավարի մսի ներմուծումը Միության անդամ պետություններ 2014 թվականին կազմել է 675,2 հազ. տոննա, իսկ դրա մասնաբաժինը ներքին սպառման մեջ՝ **22,3%**: Միության անդամ պետություններում տավարի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է տավարի մսի ամբողջական ներմուծման նվազում 268,3 հազ տոննայով կամ **39,7%-ով**, ներմուծման մասնաբաժինը ներքին սպառման մեջ կարող է նվազել **մինչեւ 13,8%**:

Միության անդամ պետությունների՝ տավարի մսի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵՍՏՍ	675,2	430,5	427,9	406,9
Հայաստան	5,4	2,8	2,2	2,0
Բելառուս	7,8	1,6	1,3	1,2
Ղազախստան	12,9	11,2	10,9	9,5
Ռուսաստան	649,1	414,9	413,5	394,2

Տավարի մսի ներմուծման նվազումը ըստ կանխատեսման նախատեսվում է բոլոր անդամ պետություններում:

Ընդհանուր առմամբ Միությունում տավարի մսի **սպառման** շուկան կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում գնահատվում է մոտ **2,9 մլն տոննա**: Կանխատեսվում է տավարի մսի ներքին օգտագործման նվազում 2017 թվականին 2,6%-ով՝ հաշվետու 2014 թվականի համեմատ, ինչը պայմանավորված է Ռուսաստանում օգտագործման նվազմամբ (5,1%-ով):

Միության անդամ պետությունների՝ տավարի մսի սպառման ներքին շուկան, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	3 032,9	2 848,1	2 900,6	2 952,9
Հայաստան	64,0	65,9	73,5	76,9
Բելառուս	180,5	203,6	200,0	201,0
Ղազախստան	434,6	437,7	440,9	440,9
Ռուսաստան	2 353,8	2 140,9	2 186,2	2 234,1

Պլանավորվող ժամանակահատվածում տավարի մսի ներքին շուկայի աճ է նկատվում Հայաստանում՝ 20,2%-ով, Բելառուսում՝ 11,4%-ով, Ղազախստանում՝ 1,4%-ով՝ 2014 թվականի մակարդակի համեմատ:

Կանխատեսումային ցուցանիշների համաձայն՝ Միության անդամ պետությունների՝ տավարի մսի **փոխադարձ առևտրի աճը** 2017 թվականին 2014 թվականի համեմատ կկազմի **15,5%**: Փոխադարձ առևտրի ծավալն ընդամենը պլանավորվում է՝ 2016 թվականին՝ 143,8 հազ. տոննա ծավալով, 2017 թվականին՝ 149,8 հազ. տոննա:

Միության անդամ պետությունների՝ տավարի մսի **փոխադարձ առևտուրը** 2017 թվականին բնութագրվում է Ղազախստանի եւ Ռուսաստանի կողմից միմյանց համար ներքին շուկայում **հավելուրդային առաջարկով**, ինչպես նաև

Ղազախստանի եւ Ռուսաստանի համար Հայաստանի առաջարկով դրանց կողմից պահանջարկի բացակայության դեպքում: Ընդհանուր առմամբ Միությունում 2017 թվականին առաջարկը **3,8 հազ. տոննայով** գերազանցում է պահանջարկը:

Այսպիսով, Ռուսաստանը պլանավորում է ներկրել Ղազախստանից 1,5 հազ. տոննա 2016 թվականին եւ 2,0 հազ. տոննա 2017 թվականին, ընդ որում՝ Ղազախստանի առաջարկը կազմում է համապատասխանաբար 6,5 հազ. տոննա եւ 8,5 հազ. տոննա: Ղազախստանն իր հերթին 2016-2017թթ. կանխատեսում է տարեկան 1,1 հազ. տոննա ծավալի ներկրում Ռուսաստանից, իսկ Ռուսաստանի առաջարկը կազմում է համապատասխանաբար 1,8 հազ. տոննա եւ 2,3 հազ. տոննա:

Հայաստանը 2016-2017թթ. կանխատեսում է տարեկան 0,5 հազ. տոննա ծավալի արտահանում Ղազախստան, ընդ որում՝ Ղազախստանում բացակայում է դրա պահանջարկը:

Դրա հետ մեկտեղ կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում Բելառուսի եւ Ռուսաստանի առաջարկը Հայաստանի համար դրա կողմից պահանջարկի առկայության դեպքում բացակայում է:

Գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում երրորդ երկրների հետ՝ արտաքին առևտրի նկատմամբ փոխադարձ առևտրի գերակայության հիման վրա: Կատարված հավասարակշռման արդյունքում 2016 թվականին բոլոր անդամ պետությունների պահանջարկը ամբողջ ծավալով հաշվի է առնվել՝ բացառությամբ Հայաստանի, որտեղ չբավարարող ծավալները փոխհատուցվում են 0,2 հազ. տոննայով ներմուծման ավելացման հաշվին: 2017 թվականին, հաշվի առնելով Ռուսաստանի համար Հայաստանի եւ Ղազախստանի կողմից առկա հավելուրդային առաջարկը, Ռուսաստանի ներմուծումը նվազել է 3,3 հազ. տոննայով: Ղազախստանի համար Հայաստանի առաջարկը ամբողջ ծավալով հաշվի է առնվել, արդյունքում Ղազախստանի ներմուծումը նվազել է՝ 2016 թվականին՝ 0,1 հազ. տոննայով, 2017 թվականին՝ 0,5 հազ. տոննայով:

**Միության անդամ պետությունների՝ տավարի մսի փոխադարձ
առևտուրը. ներսերում (պահանջարկ) հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	129,7	141,9	143,8	149,8
Հայաստան	0	0	3,8	5,5
Բելառուս	0,2	0,2	0,2	0,3
Ղազախստան	4,7	5,7	3,3	3,2
Ռուսաստան	124,8	136,0	136,5	140,8

**Միության անդամ պետությունների՝ տավարի մսի փոխադարձ
առևտուրը. արտահանում (առաջարկ) հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	129,7	141,9	143,8	149,8
Հայաստան	0	0	0,6	2,0
Բելառուս	126,0	138,2	134,7	136,7
Ղազախստան	2,3	1,9	6,5	8,5
Ռուսաստան	1,4	1,8	2,0	2,6

Ծանոթագրություն. Բելառուսի եւ Ռուսաստանի միջեւ փոխադարձ առևտուրը նշված է՝ հաշվի առնելով Միութենական պետության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Եվրասիական տնտեսական միությունն իր սեփական արտադրության հաշվին բավարարում է տավարի մսի ներքին պահանջմունքը **79,6%-ով**: 2017 թվականի սկզբին այդ ցուցանիշը, համաձայն պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման, կավելանա մինչեւ 83,7%:

**Սեփական արտադրության տավարի մտվ ինքնաապահովվածության
մակարդակը, %**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	79,6	85,8	84,7	83,7
Հայաստան	92,2	96,5	93,3	93,2
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	92,2	96,5	98,5	100,4
Բելառուս	163,8	166,0	166,5	166,7
Ղազախստան	93,3	95,3	97,6	98,7
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	94,4	96,6	98,3	99,4
Ռուսաստան	70,3	76,0	74,3	73,0
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	75,6	82,3	80,6	79,3

Ինքնաապահովվածության առավելագույն մակարդակ նկատվում է Բելառուսում՝ 163,8% 2014 թվականին, Ղազախստանում՝ 93,3%, Հայաստանում՝ 92,2%: Ռուսաստանում տավարի մտվ ինքնաապահովվածության մակարդակն ամենացածրն է (70,3%), Միության անդամ պետություններից մատակարարումների հաշվին ինքնաապահովվածությունը 2017 թվականին կարող է ավելանալ մինչև 79,3%:

Կանխատեսումային տվյալների համաձայն՝ Միության անդամ պետությունների՝ տավարի մսի շուկան գրավիչ է ներդրումների համար՝ կապված սպառման մեջ ներմուծման գերակշռող մասնաբաժնի հետ: Անդամ պետությունները պլանավորում են երրորդ երկրներից ներմուծել միջինում մոտ 400 հազ. տոննա տավարի միս, ինչը դրամական արտահայտությամբ կազմում է մոտ 1,0 մլրդ ԱՄՆ դոլար:

2.2.2. ԽՈՋԻ ՄԻՍ

Խոզի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ Միության անդամ պետություններում (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը. կանխատեսում չի ներկայացվել) 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է խոզի մսի արտադրության ընդհանուր աճ 329,4 հազ. տոննայով կամ 9,5%-ով: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտադրության ծավալը կկազմի 3,65 մլն տոննա:

**Միության անդամ պետություններում խոզի մսի արտադրությունը,
հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	3 450,2	3 566,1	3 653,0	3 779,6
Հայաստան	16,2	17,5	18,9	19,8
Բելառուս	360,3	361,6	378,0	389,0
Ղազախստան	99,8	95,2	100,0	120,0
Ռուսաստան	2 973,9	3 091,8	3 156,1	3 250,8

Խոզի մսի արտադրության աճ կանխատեսվում է Միության բոլոր անդամ պետություններում՝ Ռուսաստանում՝ 9,3%-ով, Հայաստանում՝ 22,2%-ով, Ղազախստանում՝ 20,2%-ով, Բելառուսում՝ 8,0%-ով:

Միության անդամ պետություններից խոզի մսի **արտահանումն** աննշան է. 2014 թվականին այն կազմել է 28,5 հազ. տոննա կամ ամբողջ արտադրության 0,8%-ը: Ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ 2017 թվականի սկզբին սպասվում է խոզի մսի **արտահանման ավելացում** մինչև 43,4 հազ. տոննա կամ **52,3%-ով**: Երրորդ երկրների շուկաներ խոզի մսի առաջարկը կապահովվի Ռուսաստանի հաշվին:

Խոզի մսի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	28,5	33,8	36,1	43,4
Հայաստան	0	0	0,2	0,2
Բելառուս	0	0	0	0
Ղազախստան	0	0,1	0	0
Ռուսաստան	28,5	33,7	35,9	43,2

Խոզի մսի ներմուծումը Միության անդամ պետություններ 2014 թվականին կազմել է 462,9 հազ. տոննա, իսկ դրա մասնաբաժինը ներքին սպառման մեջ՝ 11,7%: Միության անդամ պետություններում խոզի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը)՝ 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է խոզի մսի ամբողջական ներմուծման նվազում 203,7 հազ. տոննայով կամ 44%-ով. ներմուծման մասնաբաժինը ներքին սպառման մեջ կարող է նվազել մինչեւ 6,4%:

Միության անդամ պետությունների՝ խոզի մսի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	462,9	316,3	289,9	259,2
Հայաստան	7,3	6,4	7,5	0,5
Բելառուս	34,1	3,6	22,9	22,8
Ղազախստան	7,8	3,4	3,3	3,2
Ռուսաստան	413,7	302,9	256,2	232,7

Ըստ կանխատեսման՝ խոզի մսի ներմուծման նվազում է սպասվում Միության բոլոր անդամ պետություններում:

Ընդհանուր առմամբ Միությունում խոզի մսի **սպառման** շուկան կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում գնահատվում է մոտ **4,0 մլն տոննա**: 2017 թվականին հաշվետու 2014 թվականի համեմատ կանխատեսվում է խոզի մսի ներքին օգտագործման ավելացում 1,9%-ով:

Միության անդամ պետությունների՝ խոզի մսի սպառման ներքին շուկան, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	3 967,2	3 800,0	3 992,4	4 043,5
Հայաստան	21,3	22,2	24,8	25,3
Բելառուս	399,2	372,8	383,0	393,0
Ղազախստան	107,2	104,6	101,5	120,3
Ռուսաստան	3 439,5	3 300,4	3 483,1	3 504,9

Խոզի մսի ներքին օգտագործման նվազում է սպասվում Բելառուսում՝ 1,6%-ով: Խոզի մսի ներքին սպառման առավելագույն ավելացում է սպասվում Հայաստանում՝ 18,8%-ով, Ղազախստանում՝ 12,2%-ով, Ռուսաստանում կավելանա 1,9%-ով:

Միության անդամ պետությունների՝ խոզի մսի **փոխադարձ** առևտուրը բնութագրվում է ներքին շուկայում **հավելուրդային առաջարկով**՝ 2016 թվականին՝ 14,7 հազ. տոննա, 2017 թվականին՝ 14,1 հազ. տոննա ծավալով:

Այսպիսով, Հայաստանը կանխատեսում է 2016-2017թթ. ժամանակահատվածում համապատասխանաբար 0,8 հազ. տոննա եւ 1,3 հազ. տոննա ծավալով խոզի միս մատակարարել Ռուսաստան (Հայաստանից Ռուսաստանի պահանջարկը, ինչպես նաեւ Հայաստանի համար առաջարկը բացակայում է): Ռուսաստանը պլանավորում է 2016-2017թթ. Ղազախստանից տարեկան 2,3 հազ. տոննա ծավալով խոզի մսի ներկրում, միաժամանակ Ղազախստանից առաջարկը կազմում է համապատասխանաբար 3,0 եւ 3,5 հազ. տոննա:

Ղազախստանն իր հերթին պլանավորում է ներկրել Ռուսաստանից տարեկան 0,4 հազ. տոննա, Ղազախստանի համար Ռուսաստանի առաջարկը 2016-2017թթ. կազմում է համապատասխանաբար 0,5 եւ 0,6 հազ. տոննա:

Դրա հետ մեկտեղ Բելառուսից եւ Ռուսաստանից Հայաստանի առկա պահանջարկի դեպքում դրանց կողմից առաջարկը բացակայում է:

Գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան՝ ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում՝ երրորդ երկրների հետ արտաքին առևտրի նկատմամբ փոխադարձ առևտրի գերակայության հիման վրա: Կատարված հավասարակշռման արդյունքում Ռուսաստանի ներմուծումը նվազել է 2016 թվականին՝ 20,6 հազ. տոննայով, 2017 թվականին՝ 13,9 հազ. տոննայով: Բելառուսի պահանջարկը 2016-2017թթ. ամբողջ ծավալով բավարարվել է: Ղազախստանի համար Ռուսաստանի առաջարկը ամբողջ ծավալով հաշվի է առնվել, ինչի արդյունքում Ղազախստանի ներմուծումը 2016-2017թթ. նվազել է համապատասխանաբար 0,1 եւ 0,2 հազ. տոննայով: Հայաստանի համար առաջարկի բացակայության պատճառով դրա պահանջարկը 2016 թվականին առաջարկվում է բավարարել ներմուծումը 6,0 հազ. տոննայով ավելացնելու հաշվին, 2017 թվականին Հայաստանի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարվել է:

Միության անդամ պետությունների՝ խոզի մսի փոխադարձ առևտուրը.
ներսերում (պահանջարկ) հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	16,9	3,8	25,4	26,6
Հայաստան	0	0	0	7,5
Բելառուս	3,4	0,9	1,1	1,2
Ղազախստան	0,1	0,4	0,5	0,6
Ղրղզստան	0,1	0	-	-
Ռուսաստան	13,3	2,5	23,8	17,3

Միության անդամ պետությունների՝ խոզի մսի փոխադարձ առևտուրը.
արտահանում (առաջարկ) հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	16,9	3,8	25,4	26,6
Հայաստան	0	0	0,8	1,3
Բելառուս	12,3	0,7	20,0	20,0
Ղազախստան	1,1	1,8	3,0	3,5
Ղրղզստան	-	-	-	-
Ռուսաստան	3,5	1,3	1,6	1,8

Ծանոթագրություն. Բելառուսի եւ Ռուսաստանի միջեւ փոխադարձ առևտուրը նշված է՝ հաշվի առնելով Միութենական պետության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Եվրասիական տնտեսական միությունը խոզի մսի ներքին պահանջմունքը սեփական արտադրության հաշվին բավարարում է 87%-ով: 2017 թվականի սկզբին այդ ցուցանիշը, համաձայն պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման, կավելանա մինչեւ 93,5%:

**Սեփական արտադրության խոզի մտով ապահովվածության
մակարդակը, %**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	87,0	93,8	91,5	93,5
Հայաստան	76,1	78,9	76,2	78,3
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	76,1	78,9	76,2	107,9
Բելառուս	90,3	97,0	98,7	99,0
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	91,1	97,2	99,0	99,3
Ղազախստան	93,1	91,0	98,5	99,8
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	93,2	91,4	99,0	100,2
Ռուսաստան	86,5	93,7	90,6	92,8
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	86,9	93,8	91,3	93,2

Ինքնաապահովվածության առավելագույն մակարդակ է նկատվում Բելառուսում եւ Ղազախստանում՝ 2014 թվականին մոտ 90%: Հայաստանում խոզի մտով ինքնաապահովվածության մակարդակն ամենացածրն է (76%), Միության անդամ պետություններից մատակարարումների հաշվին ինքնաապահովվածությունը 2017 թվականին կարող է հասնել 108%-ի: Ղազախստանը խոզերի գլխաքանակի աճի հաշվին կանխատեսում է դուրս գալ խոզի մտով ինքնաապահովվածության 99,8% մակարդակի վրա: Ռուսաստանում Միության երկրներից մատակարարումների հաշվին ինքնաապահովվածության մակարդակը կարող է աճել մինչև 93,2%:

Հաշվի առնելով ներքին շուկայում խոզի մսի բավարար առաջարկի առկայությունը՝ նպատակահարմար է կատարել Միության երկրներից (մասնավորապես Բելառուսից) մատակարարումներով ներմուծման փոխարինում՝ ավելացնելով պահանջարկը ներքին շուկայում:

2.2.3. ՈՉԽԱՐԻ ՄԻՍ

Ոչխարի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ Միության անդամ պետություններում (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը. կանխատեսում չի ներկայացվել) 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է ոչխարի մսի արտադրության ընդհանուր աճ 17,9 հազ. տոննայով կամ 4,8%-ով: Կանխատեսվում է, որ 2016 թվականին արտադրության ծավալը կկազմի 388,7 հազ. տոննա:

Միության անդամ պետություններում ոչխարի մսի արտադրությունը,
հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	374,9	379,2	388,7	392,8
Հայաստան	9,1	9,7	10,5	11,0
Ղազախստան	161,9	165,1	171,8	175,0
Ռուսաստան	203,9	204,4	206,4	206,8

Ոչխարի մսի արտադրության աճ կանխատեսվում է Միության բոլոր անդամ պետություններում՝ Ռուսաստանում՝ 1,4%-ով, Ղազախստանում՝ 8%-ով եւ Հայաստանում՝ 21%-ով:

Միության անդամ պետություններից ոչխարի մսի արտահանումն աննշան է. 2014 թվականին այն կազմել է **0,3 հազ. տոննա** կամ ամբողջ արտադրության 0,1%-ը: Ոչխարի մսի առաջարկը երրորդ երկրների շուկաներ ապահովվելու է Հայաստանի հաշվին, կանխատեսման համաձայն՝ արտահանումը 2017 թվականին կպահպանվի 2014 թվականի մակարդակի վրա:

Ոչխարի մսի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	0,31	0,71	0,21	0,31
Հայաստան	0,3	0,7	0,2	0,3
Ղազախստան	0,01	0,01	0,01	0,01
Ռուսաստան	0,0	0,0	0,0	0,0

Ոչխարի մսի ներմուծումը Միության անդամ պետություններ 2014 թվականին կազմել է **9,0 հազ. տոննա**, իսկ դրա մասնաբաժինը ներքին սպառման մեջ՝ **2,4%**: Միության անդամ պետություններում ոչխարի մսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը եւ Բելառուսի Հանրապետությունը)՝ 2017 թվականի սկզբին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է ոչխարի մսի ամբողջական ներմուծման նվազում 0,9 հազ. տոննայով կամ 10%-ով. ներմուծման մասնաբաժինը ներքին սպառման մեջ կարող է նվազել մինչեւ 2%:

Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	9,0	8,7	8,4	8,1
Հայաստան	0	0	0	0
Ղազախստան	0,3	0,1	0,098	0,096
Ռուսաստան	8,7	8,6	8,29	7,99

Ոչխարի մսի ներմուծումը Հայաստանում բացակայում է, Ռուսաստանում, ըստ կանխատեսման, սպասվում է ներմուծման **8,2%-ով** նվազում, Ղազախստանում՝ **3 անգամ**:

Ընդհանուր առմամբ Միությունում ոչխարի մսի սպառման շուկան կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում գնահատվում է մոտ **386 մլն տոննա**: Կանխատեսվում է ներքին օգտագործման ավելացում 2017 թվականին հաշվետու 2014 թվականի համեմատ՝ **2,9%-ով**, այդ թվում՝ Ռուսաստանում՝ 1,9%-ով, Ղազախստանում՝ 4,2%-ով, Հայաստանում՝ 3,4%-ով:

Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի սպառման ներքին շուկան, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	375,3	383,2	386,1	386,2
Հայաստան	8,8	9,0	9,1	9,1
Ղազախստան	163,2	170,0	170,0	170,0
Ռուսաստան	203,3	204,2	207,0	207,1

Ընդհանուր առմամբ Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի շուկան կողմնորոշված է դեպի ներքին շուկա եւ գրեթե ամբողջությամբ ապահովվում է սեփական արտադրությամբ:

Կանխատեսումային ցուցանիշների համաձայն՝ Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի **փոխադարձ առևտուրը կավելանա 67 տոննայից մինչև 1,6 հազ. տոննա**: Ընդամենը փոխադարձ առևտրի ծավալը 2016 թվականին պլանավորվում է հասցնել 1,2 հազ. տոննայի:

Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի **փոխադարձ առևտուրը** կանխատեսվող 2016-2017թթ. ժամանակահատվածում բնութագրվում է Ղազախստանի եւ Ռուսաստանի համար Հայաստանի, ինչպես նաև Ղազախստանի համար Ռուսաստանի **հավելորդային առաջարկով**: Միաժամանակ Ղազախստանից Ռուսաստանի պահանջարկը զգալիորեն բարձր է Ռուսաստանի համար առաջարկից:

Այսպիսով, Հայաստանը կանխատեսում է 2016 թվականին Ղազախստան մատակարարել 0,5 հազ. տոննա եւ Ռուսաստան՝ 0,7 հազ. տոննա, 2017 թվականին՝ համապատասխանաբար 0,7 եւ 0,9 հազ. տոննա (դրանց կողմից պահանջարկի բացակայության դեպքում): Հայաստանը Ռուսաստանից եւ Ղազախստանից ոչխարի մսի ներկրում չի կանխատեսում:

Ռուսաստանը պլանավորում է 2016-2017թթ. Ղազախստանից տարեկան 0,8 հազ. տոննա ոչխարի մսի ներկրում, միաժամանակ Ղազախստանից առաջարկը կազմում է ընդամենը համապատասխանաբար մոտ 10 տոննա: Ղազախստանը պլանավորում է Ռուսաստանից տարեկան մոտ 2 տոննա ներկրում, իսկ Ռուսաստանը 2016-2017թթ. կանխատեսում է դեպի Ղազախստան 4 եւ 6 տոննա ծավալի արտահանում: Բացի այդ Ռուսաստանը 2016-2017թթ. պլանավորում է Բելառուս մատակարարել տարեկան մոտ 30 տոննա ոչխարի միս (Բելառուսից կանխատեսում չի ներկայացվել):

Գյուղատնտեսական արտադրանքի ու պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում՝ երրորդ երկրների հետ արտաքին առևտրի նկատմամբ փոխադարձ առևտրի գերակայության հիման վրա:

Ղազախստանի համար Հայաստանի առաջարկը վերուղղվել է Ռուսաստան, ինչի արդյունքում Ռուսաստանի ներմուծումը 2016 թվականին նվազել է 0,3 հազ. տոննայով, 2017 թվականին՝ 0,6 հազ. տոննայով: Ղազախստանի համար Հայաստանի առաջարկը ամբողջ ծավալով հաշվի է առնվել, ինչի հաշվին Ղազախստանի ներմուծումը նվազել է. 2016 թվականին՝ 2 տոննայով եւ 2017 թվականին՝ 4 տոննայով:

**Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի փոխադարձ
առևտուրը. ներմուծում (պահանջարկ), հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	0,067	0,032	1,241	1,645
Հայաստան	0	0	0	0
Բելառուս	0,053	0,02	0,027	0,029
Ղազախստան	0,004	0,002	0,004	0,006
Ռուսաստան	0,01	0,01	1,21	1,61

Ծանոթագրություն. Բելառուսի մասով ներսերումը (առաջարկը) ներկայացված է Ռուսաստանի պահանջարկի եւ առաջարկի կանխատեսման համաձայն տվյալներով:

**Միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի փոխադարձ
առևտուրը. դուրսբերում (առաջարկ), հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	0,067	0,032	1,241	1,645
Հայաստան	0	0	1,2	1,6
Ղազախստան	0,01	0,01	0,01	0,01
Ռուսաստան	0,057	0,022	0,031	0,035

Եվրասիական տնտեսական միությունն սեփական արտադրության հաշվին ամբողջությամբ բավարարում է ոչխարի մսի ներքին պահանջմունքը 2014 թվականին՝ **99,9%-ով**: 2017 թվականի սկզբին այդ ցուցանիշը, համաձայն պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման, կկազմի **101,7%**:

Սեփական արտադրության ոչխարի մսով ապահովվածության
մակարդակը, %

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (զնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	99,9	99,0	100,7	101,7
Հայաստան	103,4	107,8	115,4	120,9
Ղազախստան	99,2	97,1	101,1	102,9
Ռուսաստան	100,3	100,1	99,7	99,9
<i>հաշվի առնելով Միության անդամ պետություններից մատակարարումները</i>	<i>100,3</i>	<i>100,1</i>	<i>100,3</i>	<i>100,6</i>

Հայաստանում կանխատեսվում է 2017 թվականին ոչխարի մսով ինքնաապահովվածությունը ավելացնել մինչև 121% մակարդակի, Ղազախստանում՝ 103%: Ռուսաստանում, Միության երկրներից մատակարարումների հաշվին, ոչխարի մսով ինքնաապահովվածության մակարդակը կարող է աճել մինչև 101%:

Ընդհանուր առմամբ Եվրասիական միության անդամ պետությունների՝ ոչխարի մսի շուկան կողմնորոշված է դեպի ներքին շուկա եւ գրեթե ամբողջությամբ ինքնաապահովվում է սեփական արտադրությամբ:

2.2.4. ԹՌՉՆԱՄԻՍ

Համաձայն Միության անդամ պետություններում թռչնամսի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի (հաշվի չառնելով Ղրղզստանի Հանրապետությունը. կանխատեսում չի ներկայացվել)՝ 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է թռչնամսի արտադրության 672 հազ. տոննայով կամ 14,2%-ով ընդհանուր աճ: 2016 թվականին կանխատեսվում է արտադրության 5 294,4 հազ. տոննա ծավալ, իսկ 2017 թվականին՝ 5 390,2 հազ. տոննա:

Թռչնամսի արտադրությունը Միության անդամ պետություններում,
հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	4 718,1	5 079,3	5 294,4	5 390,2
Հայաստան	8,4	9,1	9,7	10,2
Բելառուս	414,1	447,5	444,0	445,0
Ղազախստան	134,2	146,1	185,0	205,0
Ռուսաստան	4,161,4	4,476,6	4,655,7	4,730,0

2017 թվականին արտադրության ամենամեծ աճը սպասվում է Ղազախստանում՝ 52,8% 2014 թվականի մակարդակի համեմատ՝ մինչև 205,0 հազ. տոննա, Հայաստանում՝ 21,4% մինչև 10,2 հազ. տոննա, Ռուսաստանում՝ 13,7% մինչև 4 730 հազ. տոննա, Բելառուսում՝ 7,5% մինչև 445 հազ. տոննա:

Միության անդամ պետությունները երրորդ երկրների շուկաներ արտահանելու ուղղվածություն չունեն: 2014 թվականին Միության անդամ պետություններից **արտահանման** հետ կապված թռչնամսի **մատակարարումների** ընդհանուր ծավալը 2014 թվականին կազմել է 35,4 հազ. տոննա: Կանխատեսման

համաձայն՝ 2017 թվականին սպասվում է թոշնամսի արտահանման աճ 2,5 անգամ՝ մինչև 89,8 հազ. տոննա: 2016 թվականին կանխատեսվում է 60,7 հազ. տոննա արտահանման ծավալ:

Թոշնամսի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	35,4	37,1	60,7	89,8
Հայաստան	0,045	0,055	0	0
Բելառուս	0,01	1,9	10,8	8,8
Ղազախստան	0	0	0	0
Ռուսաստան	35,3	35,1	49,9	81,0

Թոշնամսի ներքին սպառման մեջ ներմուծման մասնաբաժինը ընդհանուր առմամբ Միությունում 2014 թվականի 11,0%-ից 2017 թվականին նվազել է մինչև 5%: Միության անդամ պետություններում ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ 2017 թվականին 2014 թվականի համեմատ սպասվում է թոշնամսի ընդհանուր ներմուծման զգալի նվազում՝ 290,4 հազ. տոննայով կամ 52,3%-ով:

Միության անդամ պետությունների՝ թոշնամսի ներմուծումը,

հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	555,3	310,8	281,5	264,9
Հայաստան	31,6	30,6	7,5	6,9
Բելառուս	28,0	17,3	18,0	18,0
Ղազախստան	141,5	132,9	110,0	107,0
Ռուսաստան	354,2	130,0	146,0	133,0

2017 թվականի կանխատեսումով թռչնամսի ներմուծման նվազում է նկատվում Միության բոլոր անդամ պետություններում:

Ընդհանուր առմամբ Միությունում թռչնամսի **սպառման շուկան** 2016-2017 թվականների կանխատեսվող ժամանակահատվածում գնահատվում է տարեկան շուրջ **5,2-5,4 մլն տոննա**: Ներքին օգտագործման աճը 2014 թվականի հաշվետու տարվա համեմատ 2017 թվականին կկազմի 6,2%:

Պլանավորվող ժամանակահատվածում Միության անդամ պետություններում թռչնամսի ընդհանուր ներքին շուկայի աճը պայմանավորված է առաջին հերթին 2014 թվականի համեմատ Ռուսաստանի եւ Բելառուսի շուկաների՝ համապատասխանաբար 7,4% եւ 2,9% աճով:

Հայաստանի թռչնամսի շուկան կաճի 3,3%, Ղազախստանում սպասվում է 8,2% նվազում:

**Միության անդամ պետությունների՝ թռչնամսի սպառման ներքին
շուկան, հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	5,060,2	5,143,2	5,201,4	5,373,0
Հայաստան	39,8	39,7	40,6	41,1
Բելառուս	328,7	335,3	338,1	338,2
Ղազախստան	290,6	277,4	266,7	266,7
Ռուսաստան	4,401,0	4,490,8	4,556,0	4,727,0

2016-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում Միության անդամ պետությունների՝ թռչնամսի **փոխադարձ առեւտուրը** բնութագրվում է ներքին շուկայում **առաջարկի պակասով** (2016 թվականին՝ 16,2 հազ. տոննա, 2017 թվականին՝ 14,3 հազ. տոննա):

Հայաստանը կանխատեսում է 2016-2017 թվականներին Ռուսաստանից ներմուծել համապատասխանաբար 17,0 եւ 19,0 հազ. տոննա ծավալով թռչնամիս, ընդ որում՝ Ռուսաստանի կողմից դրա առաջարկը բացակայում է:

Դրա հետ մեկտեղ Ղազախստանի համար Ռուսաստանի առաջարկը, ինչպես նաև Ռուսաստանի համար Ղազախստանի առաջարկը մեծ են մեկը մյուսից ունեցած պահանջարկներից: Այսպես, Ռուսաստանը պլանավորում է 2016-2017 թվականներին Ղազախստան արտահանել համապատասխանաբար 25,5 եւ 26,0 հազ. տոննա, սակայն Ղազախստանը պլանավորում է Ռուսաստանից ներմուծել տարեկան միայն 11 հազ. տոննա: Ղազախստանն իր հերթին 2016-2017 թվականներին կանխատեսում է համապատասխանաբար 9 եւ 10 հազ. տոննա ծավալով արտահանում դեպի Ռուսաստան, իսկ Ռուսաստանը պլանավորում է տարեկան շուրջ 7 հազ. տոննա ներմուծում Ղազախստանից:

Բացի այդ, 2016-2017 թվականներին Ղրղզստանին թռչնամիս մատակարարել պլանավորում են Ռուսաստանը՝ համապատասխանաբար 5,3 եւ 5,7 հազ. տոննա, Ղազախստանը՝ 1,5 եւ 3,0 հազ. տոննա, եւ Բելառուսը՝ 0,2 հազարական տոննա (առաջարկները ամբողջությամբ հաշվի են առնվել):

Գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան՝ պահանջարկը առավելագույնս բավարարելու համար ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում (հաշվի առնելով Ղազախստանի եւ Ռուսաստանի ավելցուկային առաջարկը):

Դրա հետ մեկտեղ, ներքին շուկայում առաջարկի պակասի պատճառով Ռուսաստանի պահանջարկը ապահովված է ներմուծումն ավելացնելու հաշվին. 2016 թվականին՝ 21,7 հազ. տոննայով, եւ 2017 թվականին՝ 19,3 հազ. տոննայով: Հայաստանի պահանջարկը ոչ ամբողջությամբ բավարարելու պատճառով անդամ պետությունների մատակարարումների հաշվին ներմուծումն ավելացել է՝ 2016 թվականին՝ 1,5 հազ. տոննայով, 2017 թվականին՝ 3,9 հազ. տոննայով:

Միության անդամ պետությունների՝ թոչնամսի փոխադարձ առևտուրը՝
ներմուծում (պահանջարկ), հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	138,8	175,9	162,6	168,2
Հայաստան	0	0	23,5	24,1
Բելառուս	3,3	1,9	2,1	2,2
Ղազախստան	18,2	27,9	11,0	11,0
Ղրղզստան	1,4	5,8	7,0	8,9
Ռուսաստան	115,9	140,3	119,0	122,0

Միության անդամ պետությունների՝ թոչնամսի փոխադարձ առևտուրը՝
արտահանում (առաջարկ), հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	138,8	175,9	162,6	168,2
Հայաստան	0	0,0004	0	0
Բելառուս	111,4	134,4	119,2	121,2
Ռուսաստան	22,0	33,9	32,9	34,0

- Օսնոթագրություններ.
1. Բելառուսի եւ Ռուսաստանի միջեւ փոխադարձ առևտուրը նշվել է՝ հաշվի առնելով Միութենական պետության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները:
 2. Ներմուծման (պահանջարկի) վերաբերյալ Ղրղզստանի տվյալները բերված են անդամ պետությունների կանխատեսումների համաձայն:

Եվրասիական տնտեսական միությունը **սեփական** արտադրության հաշվին թոչնամսի ներքին **պահանջը** բավարարում է **93%-ով**: Պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման համաձայն՝ 2017 թվականին սպասվում է սեփական արտադրության թոչնամսով ամբողջական ապահովվածություն:

**Սեփական արտադրության թոչնամսով ապահովվածության
մակարդակը, %**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	93,2	98,8	101,8	100,3
Հայաստան	21,1	22,9	23,8	24,8
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>21,1</i>	<i>22,9</i>	<i>81,7</i>	<i>83,5</i>
Բելառուս	126,0	133,5	131,3	131,6
Ղազախստան	46,2	52,7	69,4	76,9
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>52,4</i>	<i>62,7</i>	<i>73,5</i>	<i>81,0</i>
Ռուսաստան	94,6	99,7	102,2	100,1
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>97,2</i>	<i>102,8</i>	<i>104,8</i>	<i>102,6</i>

2017 թվականին ինքնաապահովվածության առավել բարձր մակարդակ ենթադրվում է Բելառուսում՝ 131,6%: Հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներմուծում)՝ Ռուսաստանում այդ ցուցանիշը կարող է ավելանալ մինչև 102,6%:

Ղազախստանում ինքնաապահովվածության մակարդակը 2017 թվականին կկազմի 77% (հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներմուծում)՝ 81%), Հայաստանում՝ 24,8% (հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներմուծում)՝ 83,5%):

Թոչնամսի մասով Միության անդամ պետություններից Հայաստանը եւ Ղազախստանը ներմուծումից ամենամեծ կախվածությունն ունեն. 2014 թվականին երկրների ներքին սպառման մեջ ներմուծման մասնաբաժինը կազմել է 79,4% եւ 48,7%: Հաշվի առնելով փոխադարձ առեւտրի մասով կատարված հաշվեկշռումը՝ 2017 թվականին պլանավորվում է նվազեցնել այդ ցուցանիշը՝ Հայաստանում՝ մինչև 16,8%, Ղազախստանում՝ մինչև 40%:

Հաշվի առնելով ներքին շուկայում թռչնամսի բավարար առաջարկի առկայությունը՝ նպատակահարմար է համարվում ներմուծումը փոխարինել Ռուսաստանից եւ Բելառուսից կատարվող մատակարարումներով՝ ավելացնելով պահանջարկը ներքին շուկայում:

2.3. ԿԱԹ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔ

Կանխատեսման համաձայն՝ Միության անդամ պետություններում 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է կաթի արտադրության ընդհանուր աճ՝ 1 827,9 հազ. տոննայով կամ 4,1%-ով: 2016 թվականին կանխատեսվում է արտադրության 45,6 մլն տոննա, 2017 թվականին՝ 46,5 մլն տոննա ծավալ:

Կաթի արտադրությունը Միության անդամ պետություններում,
հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	44 707,6	45 220,2	45 636,0	46 535,5
Հայաստան	700,4	728,6	770,0	801,5
Բելառուս	6 702,9	7 047,1	7 170,0	7 650,0
Ղազախստան	5 067,9	5 182,4	5 295,0	5 454,0
Ղրղզստան	1 445,5	1 481,1	1 502,0	1 540,0
Ռուսաստան	30 790,9	30 781,0	30 899,0	31 090,0

2017 թվականին արտադրության ամենամեծ աճը սպասվում է Հայաստանում՝ 2014 թվականի մակարդակի համեմատ 14,4%-ով՝ մինչև 801,5 հազ. տոննա, Բելառուսում՝ 14,1%-ով մինչև 7 650 հազ. տոննա, Ղազախստանում՝ 7,6%-ով մինչև 5 454 հազ. տոննա, Ղրղզստանում՝ 6,5%-ով մինչև 1 540 հազ. տոննա, Ռուսաստանում՝ 1%-ով մինչև 31 090,0 հազ. տոննա:

Միության անդամ պետությունները երրորդ երկրների շուկաներ արտահանելու ուղղվածություն չունեն: 2014 թվականին Միության անդամ պետություններից կաթի եւ կաթնամթերքի՝ **արտահանման** հետ կապված **մատակարարումների** ընդհանուր ծավալը կազմել է 442,2 հազ. տոննա: Կաթի եւ կաթնամթերքի հիմնական ծավալը երրորդ երկրների շուկա մատակարարել է Ռուսաստանը՝ 69% Միության ամբողջ արտահանումից:

Կանխատեսման համաձայն՝ 2017 թվականին սպասվում է կաթի եւ կաթնամթերքի արտահանման աճ գրեթե 43,2%-ով՝ մինչեւ 633,1 հազ. տոննա: 2016 թվականին կանխատեսվում է 620,7 հազ. տոննա արտահանման ծավալ:

Կաթի եւ կաթնամթերքի արտահանումը երրորդ երկրներ,
հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	442,2	497,0	620,7	633,1
Հայաստան	0,07	1,5	1,6	2,0
Բելառուս	53,1	31,9	166,1	170,0
Ղազախստան	3,5	25,0	26,0	27,0
Ղրղզստան	82,0	80,3	76,4	75,6
Ռուսաստան	303,5	358,3	350,6	358,5

Միությունում կաթի եւ կաթնամթերքի ներքին **սպառման** մեջ ներմուծման մասնաբաժինը ընդհանուր առմամբ 2017 թվականին 2014 թվականի համեմատ 10,2%-ից նվազելու է մինչեւ 5,2%: Կանխատեսման համաձայն՝ 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ Միությունում սպասվում է կաթի եւ կաթնամթերքի ներմուծման նվազում՝ 2 438,7 տոննայով կամ 2 անգամ:

Ըստ կանխատեսման՝ 2017 թվականին կաթի եւ կաթնամթերքի ներմուծման նվազում նկատվում է Միության բոլոր անդամ պետություններում:

**Միության անդամ պետությունների՝ կաթի եւ կաթնամթերքի
ներմուծումը, հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	4 974,2	3 325,2	2 931,2	2 535,5
Հայաստան	149,5	130,2	146,4	146,7
Բելառուս	171,9	81,9	63,3	62,9
Ղազախստան	150,4	381,7	230,5	117,1
Ղրղզստան	8,1	7,1	7,3	7,0
Ռուսաստան	4 494,3	2 724,3	2 483,7	2 201,8

Միությունում կաթի եւ կաթնամթերքի սպառման շուկան 2016-2017 թվականներին ընկած կանխատեսվող ժամանակահատվածում գնահատվում է տարեկան **49 մլն տոննա**: 2014 թվականի համեմատ 2017 թվականին կաթի եւ կաթնամթերքի ներքին շուկայի անկում է սպասվում Ռուսաստանում եւ Բելառուսում՝ համապատասխանաբար 1,8% եւ 1,1%:

Միության մյուս անդամ պետություններում կանխատեսվում է կաթի եւ կաթնամթերքի շուկայի աճ. Հայաստանում՝ 2,3%-ով, Ղրղզստանում՝ 8,3%-ով, Ղազախստանում՝ 9,1%-ով:

**Միության անդամ պետությունների՝ կաթի եւ կաթնամթերքի սպառման
ներքին շուկան, հազ. տոննա**

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	48 787,9	48 342,1	48 685,9	48 690,4
Հայաստան	840,9	797,8	839,9	860,5
Բելառուս	2 896,6	2 670,8	2 642,3	2 863,7
Ղազախստան	5 408,3	5 737,5	5 891,0	5 899,0
Ղրղզստան	1 329,9	1 366,2	1 403,2	1 440,2
Ռուսաստան	38 312,2	37 769,8	37 909,5	37 627,0

Միության երկրների պահանջարկի և առաջարկի կանխատեսումների համաձայն՝ կաթի և կաթնամթերքի փոխադարձ առևտուրը բնութագրվում է ներքին շուկայում ոչ մեծ հավասարակշռվածությամբ: Այսպես, 2016-2017 թվականներին Ղազախստանը պլանավորում է Բելառուսից ներսերում համապատասխանաբար 42 և 40 հազ. տոննա, իսկ Բելառուսը կանխատեսում է Ղազախստան մատակարարել համապատասխանաբար 73 և 74 հազ. տոննա: Նմանատիպ իրավիճակ է ստեղծվում Ղազախստան ներսերման հետ կապված Ռուսաստանի առաջարկների մասով. 2016 թվականին Ղազախստանի համար Ռուսաստանի առաջարկը կազմում է 205,3 հազ. տոննա, իսկ Ղազախստանի պահանջարկը Ռուսաստանից՝ 186,0 հազ. տոննա, 2017 թվականին՝ համապատասխանաբար 207,1 հազ. տոննա և 164 հազ. տոննա: Բացի այդ, Ղազախստանի համար Ղրղզստանի առաջարկը զգալիորեն գերազանցում է Ղրղզստանից Ղազախստանի պահանջարկը: 2016 թվականին Հայաստանի պահանջարկը Ռուսաստանից և Բելառուսից գերազանցում է նրանց առաջարկը՝ համապատասխանաբար 7,3 և 2,4 հազ. տոննա (Ռուսաստանի առաջարկը՝ 3,1 հազ. տոննա, Բելառուսինը՝ 1,2 հազ. տոննա): 2017 թվականին Ռուսաստանից Հայաստանի պահանջարկը կազմում է 8,0 հազ. տոննա (Ռուսաստանի առաջարկը՝ 3,2 հազ. տոննա), իսկ պահանջարկը Բելառուսից նրա առաջարկից մի փոքր պակաս՝ համապատասխանաբար 2,5 հազ. տոննա և 3,0 հազ. տոննա:

Գյուղատնտեսական արտադրանքի և պարենի հիմնական տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պահանջարկի և առաջարկի ամփոփ կանխատեսումների հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան՝ ներքին շուկայում կատարվել է հավասարակշռում՝ երրորդ երկրների հետ արտաքին առևտրի նկատմամբ փոխադարձ առևտրի առաջնահերթության հիման վրա: Կատարված հավասարակշռման արդյունքում Հայաստանի և Ղրղզստանի պահանջարկը բավարարվել է ամբողջ ծավալով, մյուս անդամ պետություններում նվազել է երրորդ երկրներից ներմուծումը. Ռուսաստանում 166,1 հազ. տոննայով 2016 թվականին և 295,0 հազ. տոննայով 2017 թվականին, Ղազախստանում՝ 74,5 և 104,9 հազ. տոննայով, Բելառուսում՝ 1,7 և 2,1 հազ. տոննայով համապատասխանաբար:

Միության անդամ պետությունների՝ կաթի եւ կաթնամթերքի
փոխադարձ առևտուրը՝ ներսերում (պահանջարկ), հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	4 263,9	4 975,9	5 006,1	5 245,6
Հայաստան	3,7	3,5	9,7	10,5
Բելառուս	90,0	45,0	61,7	62,1
Ղազախստան	363,8	312,8	309,5	314,9
Ղրղզստան	11,9	7,1	8,9	9,9
Ռուսաստան	3 794,5	4 607,5	4 616,3	4 848,2

Միության անդամ պետությունների՝ կաթի եւ կաթնամթերքի
փոխադարձ առևտուրը՝ դուրսերում (առաջարկ), հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	4 263,9	4 975,9	5 006,1	5 245,6
Հայաստան	23,45	89,6	91,0	96,4
Բելառուս	3 834,4	4 510,7	4 514,6	4 741,3
Ղազախստան	35,9	80,6	89,0	93,0
Ղրղզստան	44,7	51,3	52,1	53,4
Ռուսաստան	325,4	243,7	259,4	261,5

Ծանոթագրություն. Բելառուսի եւ Ռուսաստանի միջև փոխադարձ առևտուրը նշվել է՝ հաշվի առնելով Միութենական պետության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Ներկայումս կաթի արտադրության հանրագումարային ծավալը թույլ չի տալիս սեփական արտադրությամբ ամբողջությամբ ապահովել ներքին պահանջմունքը: Համաձայն կանխատեսման՝ 2017 թվականին շուկայի պահանջմունքը կապահովվի 95,6%-ով:

Սեփական արտադրության կաթով ապահովվածության մակարդակը, %

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	91,6	93,5	93,7	95,6
Հայաստան	83,3	91,3	91,7	93,1
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>83,7</i>	<i>91,8</i>	<i>92,8</i>	<i>94,4</i>
Բելառուս	231,4	263,9	271,4	267,1
Ղազախստան	93,7	90,3	89,9	92,5
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>100,4</i>	<i>95,5</i>	<i>95,1</i>	<i>97,8</i>
Ղրղզստան	108,7	108,4	107,0	106,9
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>109,6</i>	<i>108,9</i>	<i>107,7</i>	<i>107,6</i>
Ռուսաստան	80,4	81,5	81,5	82,6
<i>հաշվի առնելով մատակարարումները Միության անդամ պետություններից</i>	<i>90,3</i>	<i>93,7</i>	<i>93,7</i>	<i>95,5</i>

2017 թվականին ինքնաապահովվածության առավել բարձր մակարդակ պլանավորվում է Բելառուսում՝ 267%, եւ Ղրղզստանում՝ 106,9%: Ղազախստանում այն կկազմի 92,5% (հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներսւբերում)՝ 97,8%), Հայաստանում՝ 93,1% (հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներսւբերում)՝ 94,4%), Ռուսաստանում՝ 82,6% (հաշվի առնելով փոխադարձ առեւտուրը (ներսւբերում)՝ 95,5%):

Ներքին շուկայի ապահովվածության հասնելու համար անհրաժեշտ է Ղրղզստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածքներում ստեղծել կաթի համատեղ ապրանքային ֆերմաներ, քանի որ տվյալ երկրներում կան արոտավայրերի եւ

կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ռեզերվներ: Բելառուսի Հանրապետությունը տվյալ ուղղությամբ ունի լավ գիտական կադրերի ներուժ, ինչպես նաև բիզնես գործընթացների կառավարում:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ներմուծման հիմնական մասնաբաժինը բաժին է հասնում վերամշակման արդյունքներին՝ պանրի տեսակներ, յուղ, յոգուրտներ, թան, ինչի հետ կապված՝ նպատակահարմար ենք համարում կաթի արտադրությունը ավելացնելուն զուգահեռ արդիականացնել կամ գործարկել վերամշակման նոր հզորություններ:

2.4. ՇԱՔԱՐ

Միության անդամ պետություններում շաքարի պահանջարկի եւ առաջարկի ամփոփ կանխատեսման նախագծի համաձայն՝ 2017 թվականին 2014 թվականի համեմատ սպասվում է շաքարի արտադրության ընդհանուր աճ 115,3 հազ. տոննայով կամ 1,8%-ով: 2016 թվականին կանխատեսվում է արտադրության 6,45 մլն տոննա ծավալ:

Միության անդամ պետություններում շաքարի արտադրությունը, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	6 447,7	6 312,3	6 459,1	6 563,0
Հայաստան	89,2	53,2	70,1	75,0
Բելառուս	743,9	654,1	624,0	648,0
Ղազախստան	345,2	261,0	365,0	387,0
Ղրղզստան	20,1	24,0	30,0	33,0
Ռուսաստան	5 249,3	5 320,0	5 370,0	5 420,0

2017 թվականին արտադրության ամենամեծ աճն սպասվում է Ղրղզստանում՝ 2014 թվականի մակարդակի համեմատ 64,2%-ով կամ 12,9 հազ. տոննայով, Ղազախստանում՝ 12,1%-ով մինչև 387 հազ. տոննա, Ռուսաստանում՝ 3,3%-ով մինչև 5,42 մլն տոննա:

Միության երկու անդամ պետություններում կանխատեսվում է արտադրության անկում՝ Հայաստանում՝ 16%-ով կամ 14,2 հազ. տոննայով, Բելառուսում՝ 12,9%-ով կամ 95,9 հազ. տոննայով:

Միության անդամ պետությունները երրորդ երկրների շուկաներ արտահանելու ուղղվածություն չունեն: 2014 թվականին Միության անդամ պետություններից շաքարի՝ արտահանման հետ կապված մատակարարումների ընդհանուր ծավալը կազմել է 21,7 հազ. տոննա: Ամփոփ կանխատեսման

նախագծի համաձայն՝ 2017 թվականին սպասվում է շաքարի արտահանման նվազում 73,7%-ով մինչև 5,7 հազ. տոննա: 2016 թվականին կանխատեսվում է արտահանման 3,5 հազ. տոննա ծավալ: 2014 թվականին երրորդ երկրների շուկաներ շաքարի արտահանման հիմնական ծավալը նկատվում է Բելառուսում՝ Միության ամբողջ արտահանման 67,3%-ը, սակայն կանխատեսվող ժամանակահատվածում Բելառուսի Հանրապետության կողմից երրորդ երկրներ արտահանում չի կանխատեսվում:

Շաքարի արտահանումը երրորդ երկրներ, հազ. տոննա

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	21,7	17,9	3,5	5,7
Հայաստան	0,2	0,2	0,7	0,8
Բելառուս	14,6	14,6	0,0	0,0
Ղազախստան	2,4	0,4	2,6	3,0
Ղրղզստան	0,0	0,0	0,0	0,0
Ռուսաստան	4,5	2,7	0,2	1,9

2017 թվականին Միության անդամ պետություններում ներքին սպառման մեջ շաքարի ներմուծման մասնաբաժինը 2014 թվականի համեմատ 4,7-ից նվազել է մինչև 2,9%: Կանխատեսման նախագծի համաձայն՝ Միության անդամ պետություններում 2017 թվականին 2014 թվականի մակարդակի համեմատ սպասվում է շաքարի ընդհանուր ներմուծման զգալի նվազում 111,5 հազ. տոննայով կամ 36%-ով:

2017 թվականի կանխատեսմամբ շաքարի ներմուծման անկում է նկատվում Միության բոլոր անդամ պետություններում՝ բացառությամբ Բելառուսի, որը շաքար չի ներմուծում կանխատեսվող տարիներից եւ ոչ մեկում:

Միության անդամ պետությունների՝ շաքարի ներմուծումը, *հազ. տոննա*

Երկիր/Տարածաշրջան	2014 թվական (հաշվետվություն)	2015 թվական (գնահատում)	2016 թվական (կանխատեսում)	2017 թվական (կանխատեսում)
ԵԱՏՄ	310,0	264,1	222,1	198,5
Հայաստան	5,4	3,9	4,0	4,0
Բելառուս	0,0	9,2	0,0	0,0
Ղազախստան	124,8	128,3	57,2	55,0
Ղրղզստան	82,7	67,0	67,2	68,0
Ռուսաստան	97,1	55,7	93,7	71,5

Ընդհանուր առմամբ Միությունում շաքարի սպառման շուկան 2016-2017 թվականներն ընկած կանխատեսվող ժամանակահատվածում գնահատվում է տարեկան շուրջ **6,7 մլն տոննա**: Ներքին օգտագործման անկումը 2017 թվականին հաշվետու 2014 թվականի համեմատ կկազմի 2%:

